




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

15540

1929

355

P-24

Ա. ԲԱԼԴԱՍԱՐՅԱՆ

ՍՈՎՈՐԻՐ ՌԱԶՄԱԿԱՆ
ԳՈՐԾԸ

Յ55
F-24

ՅԵՐԵՎԱՆ
1929

2010

355

Ա. ԲԱՆԴԱՍԱՐՅԱՆ

F-29

ՍՈՎՈՐԻՐ ՌԱԶՄԱԿԱՆ
ԳՈՐԾԸ

ՅԵՐԿՐՈՐԴ ԲԱՐԵՓՈՆՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

4469

4469

2001

ՅԵՐԵՎԱՆ—1929

17603-59

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ԳՐԱԴԵՊՈԼԻԿԱՎՈՐ 1592 Բ.
ՊԱՏՎԵՐ 978. ՏԻՐԱԺ 3000

ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳԸ

Համաշխարհային բուրժուազիան վախենալով խորհրդային Միության՝ մեր յերկրի սոցիալիստական շինարարության ճակատում ունեցած հաջողություններից, ձգտում ե ղինված ուժով խանդարել այլ շինարարությունը:

Կուսակցության 15-րդ համագումարն իր ամբողջ լրջությամբ դրեց իմպերիալիստական նոր պատերազմի և խորհրդային Միության վրա ռազմական նոր հարձակում նախապատրաստելու վտանգի խնդիրը: 1914—1918 թ. թ. արյունալի սպանդանոցից դեռ նոր միայն դուրս յեկած իմպերիալիստական աշխարհը հիմնական պատրաստություն և տեսնում աշխարհի նոր բաժանման համար:

Հակառակ խաղաղասերների և սոցիալ-համաձայնողականների այն պնդումների, վոր 1914—1918 թվի համաշխարհային պատերազմը հանդիսանում եր վերջինը, իմպերիալիստական պետությունների միջև յեղած մինչպատերազմյան հակամարտությունները չվերացան:

Ընդհակառակը, այլ հակամարտությունները, ինչպես իր ժամանակին նախատեսել եր մեր կուսակցությունը, ալելի խորացել են: Նոր պատերազմի անխուսափելիությունը ներկայումս պարզ և բոլորի համար:

Համաշխարհային բուրժուազիան ձգտում ե՝ վոչնչացնել ԽՍՀՄ:

Վերջին ժամանակներս կապիտալիստական աշխարհը գործ է դնում բոլոր հնարավոր միջոցները, վորպես-դի ԽՍՀՄ-ի հետ պատերազմ սկսելու առիթ գտնի: ԽՍՀՄ-ի վրա ռազմական հարձակման ակտիվ կազմակերպողը հանդիսանում է Անգլիան, վորը վերջին ժամանակներս մի շարք ուժեղ հարվածներ ստացավ ինչպես իր սեփական բանվոր դասակարգի, նույնպես և չինական հեղափոխության կողմից: Ամեն տեսակի փորձեր են արվում ԽՍՀՄ-ի ռազմական ողակման համար. կնքվում են մի շարք պայմանագրեր, վորոնք ուղղակի նպատակ ունեն մեզ վրա հարձակում պատրաստելու: Անգլիայի ղեկավարությունը հարձակում կատարվեց Պեկինի խորհրդային ներկայացուցչության և Լոնդոնի առևտրական ներկայացուցչության վրա: Անգլիական կառավարությունը առանց վորեւ հիմունքների և արդարացումների խղեց իր գլխանադիտական հարաբերություններն ու կապերը Խորհրդային Միության հետ: Մեր վրա հարձակում կատարելու համար Անգլիան ակտիվորեն աշխատում է մի քանի պետություններից բլրկ կազմակերպել:

Մենք ականատես ենք լինում անկյուններից մեզ հասցրած մի շարք հարվածների, ինչպիսիք են Լեհաստանի մեր ներկայացուցիչ ընկ. Վոյկովի սպանությունը, ընկ. Լիզարևի վրա կատարած մահափորձը և այլն: Մենք ականատես ենք մեր թշնամիների հակահեղափոխական նոր կազմակերպություններին ու յեղույթներին (Շախտինսկի շրջանի տնտեսական հակահեղափոխությունը): Այդ բոլորը կատարվում է Անգլիայի ղեկավար-

բություններ: Այդ բոլորն արվում են ԽՍՀՄ պատերազմի մեջ քաշելու համար:

ՍՊԱՌԱՋԻՆՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Կապիտալիստները չափ են խոսել և խոսում են զինաթափման մասին: Բայց այդ բոլորը լոկ խոսքեր են միայն:

Այդ ուղղությամբ արված բոլոր յենթադրությունները և հայտարարությունները կեղծավորություններ և կատակերգություններ են, ուրիշ վոչինչ. իրականում բոլոր յերկրների կապիտալիստական պետությունները շարունակում են տենդոնեն սպառնալիսվել: Զինաթափման նախապատրաստական հանձնաժողովի աշխատանքները, վորի նիստերը տեղի եյին ունենում Ժընև-վում, վերջացան: Զինաթափման հարցերը, ինչպես և պետք եր. սպասել, առաջվա նման մնացին չլուծված:

Զինաթափվել, այլ ինչքան կարելի յե լավ սպառնալիսվել—հա բուրժուական պետությունների ներկայացուցիչների պատասխանը: Այդ առթիվ ուղղակի և բուրժուա համար բավականին հասկանալի լեզվով ասացին խորհրդային ներկայացուցիչները, իրենց ղեկավարացյում նշելով, վոր «ԽՍՀՄ-ի կառավարությունը ինչպես առաջ, նույնպես և այժմս դտնում է, վոր կապիտալիստական կարգերի պայմաններում հիմք չկա ռազմական վերահաս ընդհարումների պատճառների վերաջմանը հավատալու»:

Մենք միշտ ձգտել ենք խաղաղության: Մենք միշտ աշխատել ենք ողտադործել բոլոր հնարավորությունները:

ըն, վորպեսզի անցկացնենք մեր իսկական զինաթափու-
թյան և խաղաղության առաջարկը:

Այդպես և յեղել մինչև այժմս Խորհրդային Միու-
թյան վերաբերմունքը զինաթափման հարցի նկատմամբ,
այդպես ել կա և այլ կերպ ել լինել չի կարող: ԽՍՀՄ
առաջադրել և ընդհանուր և լրիվ զինաթափման պլանը:

Նա առաջարկել և ամբողջովին վերացնել ցամաքա-
յին, ծովային և ոդային ուժերը: Սակայն բոլոր այդ
հայտարարությունները և առաջարկությունները բուր-
ժուական մամուլում առաջ են բերել վրդովմունք և կա-
տաղություն:

Կապիտալիստական պետություններն ամեն միջոց
ձեռք են առնում, վորպեսզի ավելացնեն ռազմական
բյուջեն, ուժեղացնեն իրենց բանակի տեխնիկական
սպառազինումը և ավելացնեն նրա քանակը: Պահվում
են մինչպատերազմյան քանակի՝ ցամաքային, ծովային
հակաօդային բանակներ, անորինակ չափերով ավելանում
են ծովային նավատորմի մարտական միավորների քա-
նակը, կատաղորեն զարգանում և ողանալատորմը:

Ներքև բերված թվական թվյալները կարող են
հանդիսանալ այդ բոլորի ցայտուն ապացույցը:

ՌԱԶՄԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԸ

Անգլան, Ֆրանսիան, Իտալիան և Հյուս. Ամերի-
կայի Միացյալ Նահանգները 1913 թվին սպառազինման
համար ծախսել են 1 միլիարդ 980 միլիոն ռուբլի վոս-
կով, իսկ 1925 թվին նույն այդ պետությունների ռազ-
մական բյուջեն կազմում էր 3 միլիարդ 10 միլիոն ռուբ-
լի: Մեր հարևան նոր կազմված պետությունների ռազ-

մական ծախսերի չափը ևս չի խոսում զինաթափման
ոգտին:

Այսպես, որինակ, Լեհաստանը, Ֆինլանդիան,
Հատվիան, Եստոնիան և Ռումինիան իրենց սպառազին-
ման համար ծախսել են 166,200,000 դոլլար, իսկ 1925
թվին այդ ծախսերը հասել են 203,700,000 դոլլարի:

Թե մեծ և թե մեղ հարևան փոքր պետություններն ի-
րենց ռազմական ծախսերի ավելացման հետ միաժամա-
նակ, 1913 թ. համեմատությամբ, ավելացնում են նաև
ցամաքային բանակի քանակը: Անգլիայի, Ֆրանսիայի և
Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների ցամա-
քային բանակների թիվը 1913 թվին կազմում էր
1.610.000 մարդ, իսկ այժմ հասնում է մինչև
1.821.000-ի:

Մեր հարևանների—Ֆինլանդիա, Եստոնիա, Լատ-
վիա, Լեհաստան և Ռումինիա—բանակների ընդհանուր
թիվը 1926 թվին կազմում էր 479,000 մարդ, 1927 թը-
վին հասավ 556.000-ի:

Ասպիսով մենք տեսնում ենք, վոր մեր հարևան պե-
տությունները ևս տարեցտարի ավելացնում են բանակ-
ների թիվը:

Մինչդեռ 150.000.000 բնակչութուն ունեցող ԽՍՀՄ
պահում է ընդամենը 562.000-անոց բանակ:

Վերցնենք մի քանի տվյալներ, արտասահմանյան բա-
նակների և մեր Կարմիր բանակի քանակական հարա-
բերությունը ցույց տալու համար: Որինակ, Ֆրանսիա-
ում ամեն մի 10 հազար բնակչին ընկնում է 200 զինվոր,
Լեհաստանում և Ռումինիայում—100-ական զինվոր:
Իսկ մե՞ծ են արդյոք այդ պետությունները ԽՍՀՄ-ի
հետ համեմատած: Վոչ, իհարկե: Ամբողջ Ֆրանսիան

Վոթը և մինչև իսկ Արխանգելսկի նահանգից, իսկ Լեհաստանը և Ռուսիայի բոլորովին Վոթը և աղքատ պետություններ են: Յեվ ահա այդ պետությունները բնակչության ամեն մի 10.000 մարդուց 100-200-ը վերցնում են բանակ: Մինչդեռ ԽՍՀՄ-ում բնակչության այդ նույն ջանակին միայն 41 կարմիր-բանակային և ընկնում:

Վերևում բերված թվերը ցայտուն կերպով ցույց են տալիս աղքատ իմպերիալիստական պատերազմների անխուսափելիությունը և այն, Վոթ բոլոր կապիտալիստական յերկրները տենդորեն սպառնալիքով են այդ պատերազմների համար:

Ահա թե ինչու աշխատավորությունը պետք է ուսումնասիրի ռազմական գործը: Ահա թե ինչու ռազմական զիտություն գործնական ուսումնասիրությունը լայն անսպախել պետք է դառնի մեր Խորհրդային Միության բանվորների և գյուղացիների շրջանում, մեր յերկրի պաշտպանության աշխատանքների ընդհանուր սխեմայի մեջ:

Ամեն մի աշխատավոր պետք է զիտենա, Վոթ պատերազմն անխուսափելի յե, նա պարտավոր է դրա համար պատրաստվել, նա պետք է զիտենա, Վոթ կարմիր բանակում ձեռք բերած կարճատև ուսուցումով անհնար է ամեն ինչ ուսումնասիրել, անհրաժեշտ է ամեն դեպքում և ամեն տեղ ամրացնել ռազմական զիտություն ու փորձը:

Յուրաքանչյուր աշխատավորի վրա դրվում է ծանրը և միաժամանակ պարտավոր խնդիր՝ պաշտպանել Խորհրդային իշխանությունը, Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները:

ԾՈՎԱՅԻՆ ՅԵՎ ՈՂԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԸ

Անգլիայի ծովային նավաշինարարության 1922-23 թ.—1932-33 թ. շրջանի ծրագիրը նախատեսում է ծովային «թեթև» ուժերի ավելացումը հետևյալ կերպ. վերջրյա նավերը 54%-ով, սուզանավերը 45%-ով: Հյուս. Ամ. Մ. Նահանգները նախատեսում են վերջրյա նավերի ավելացում 24%-ով, սուզանավերի ավելացում 14%-ով: Յապոնիան—վերջրյան 80%-ով, սուզանավերը 72%-ով: Ֆրանսիան—վերջրյան 300%-ով, սուզանավերը 200%-ով:

Ներկայումս մեր Բալտիկ և Սև-ծովյան նավատորմը իրենց մարտական պատրաստությունը յետ չեն մընում ցարականից: Մեր քաղաքադանությունը խաղաղության քաղաքականություն է: Հարձակման մենք չենք պատրաստվում, բայց մեր վրա հարձակում սկսելու դեպքում, ծովային կարմիր նավատորմը պատրաստ է մեր ավերը պաշտպանելու համար: Յերբ Բալտյան նավաշինատը դուրս յեկավ ծով, նա մեծ անհանդսություն առաջ բերեց Բալտյան պետություններում: Անգլիական կառավարությունը, այդ տպավորությունները թուլացնելու պատրվակով եր, Վոթ նավատորմը ուղարկեց Բալտյան նավահանգիստները—Ռեվել—Հելսինգֆորս, իսկ ըստ ելույթյան այդ զբոսանքով անգլիական բուրժուազիան բուռնցք եր ցույց տալիս: Նա ուզում եր մեղ և մեր հարևաններին ցույց տալ իր ուժերը, իրը թե հարմար առիթին մենք միջոց ունենք Խորհրդային իշխանությունը խեղդելու համար:

Ի Պատասխան այս ծրագրի, մեզ անհրաժեշտ է ա-

վելի քան ուժեղ կերպով կպչել Կարմիր նավատորմի ամրացման գործին:

Կապիտալիստական յերկրների կողմից նույնպիսի լարվածութիւն չա՞մբ առաջ ե տարվում նաև քիմիական պատերազմի սխառատութիւնը (քիմիական, կործանիչ միջոցների արտադրութեան բարձրացումը), վորը արտակարգ արագութեամբ դործադրվում ե բոլոր կապիտալիստական յերկրներում:

Յրանսիայում խտացված ազոտի արտադրութիւնը, — վորն անհրաժեշտ ե թունավոր և պայթուցիկ նյութերի համար, առանց վորի և վոչ մի բանակ չի կարող կռվել, — հասնում ե տարեկան 200,000 տոննի: Յապոնիայում ռազմա-քիմիական հետազոտութիւնների համար մի տաշվա ընթացքում բաց ե թողնված 5,000,000 ոտլրի վոսկոլ:

Լեհաստանը, վոր դեռ 1923 թվին բավականին թույլ եր, նույնպես խոշոր հաջողութիւններ ե ձեռք բերել քիմիական արդիւնաբերութեան զարգացման բնագավառում: Լեհաստանում խտացված ազոտի տարեկան արդրութիւնը հասնում ե 30.000 տոննի:

Իմպերիալիստական պատերազմը հակայական չափերով առաջ մղեց ամիացիայի զարգացման գործը:

Յրանսիան, վորը մինչ պատերազմն ողային նավատորմով աշխարհիս ամենահարուստ յերկիրն եր, 1914 թվին պատերազմ մտալ 134 սավառնակով, իսկ պատերազմի վերջում նա արդեն ուներ 36,000 սավառնակ 49,000 ողաչունքով և մեքենավարներով, իսկ ողանավային արդիւնաբերութեան մեջ աշխատում եին 186.000 մարդ:

Նույն չափով մոտավորապես զարգացրել են իրենց ողային ուժերը նաև միքանի այլ խոշոր պետութիւններ:

Անգլիայի, Յրանսիայի, Հ. Ա. Մ. Նահանգների ողային նավատորմը 1923 թվի 150 գործող միավորներից 1926 թվին հասել ե մինչև 3,550 միավորի, այսինքն ավելացել ե 20 անգամ:



Ռազմական սավառնակ

Յիւլիանդիայում Լատվիայում, Լեհաստանում և Ռումինիայում 1923 թվին սավառնակների թիվը (վորոնք գտնվում եյին շարքում) 260 եր, իսկ ներկայումս հասնում ե 800-ի:

ՌԱԶՄԱ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԿԱՊԻՏԱ- ԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Բացի խորհրդային իշխանութեան դեմ ուղղված յորովոկացիոն քաղաքականութիւնից, յացի ցամաքային, ծովային և ողային բանակի կանոնալոր բնակազմային զորամասերից, բուրժուազիան կառուցում ե իր դասակարգային ռազմա-հասարակական կազմակերպութիւնները: Բուրժուազիան ամեն կերպ կազմակերպում ե սպիտակ-գվարդիական բանդաները, վորոնք խաղաղ

Ժամանակ կատարում են շտրեյկբրեյսերները դեր և հանդիսանում են բուրժուական պետութիւնները կամաւոր պահապանները, իսկ պատերազմի ժամանակ վորպես ժանդարմական հարյուրակներ պետք է պաշտպանեն կալվածատերերի և կապիտալիստների տիրապետութիւնն ընդդէմ զինված բանվորների և գյուղացիների: Իտալիայում, որինակ գոյութիւն ունի այսպես կոչված «ազգային ապահովութեան կամաւոր միլիցիա» — ավելի ճիշտ՝ Մուսսոլինիի ֆաշիստական միլիցիա, վորն իր շարքերում համախմբել է մինչև յերեք հարյուր հազար ֆաշիստներ՝ կազմված մանր-բուրժուազիայի թափթփուկներից, ապառասկարգայնացած ելեմենտներից: Ֆինլանդիայում «Շուցկոր» ռազմա-հասարակական կազմակերպութիւնը կանանց ոժանդակ կազմակերպութեան հետ հաշվվում է մինչև 100,000 մարդ:

Լեհաստանում Պիլսուդսկին իր հեղաշրջումը կատարեց հենվելով «Ստրելեց» միութեան վրա, վորն իր շարքերում ուներ 250,000-ից ավելի մարդ: Այդ միութեան շարքերում վորպես մշտական աշխատողներ կային իսկական զինվորական ծառայութեան մեջ գտնվող մինչև 1500 սպաներ և յենթասպաներ: Բացի «Ստրելեց» միութիւնից, Լեհաստանում գոյութիւն ունի «ռուսացի պաշտպանութեան միութիւն», վորի նպատակն է նրապատել լեհական ողագնացութեան զարգացմանը և բազմակողմանիորեն ուսումնասիրել քիմիական պաշտպանութեան, ավելի ճիշտ՝ հարձակման միջոցները: Վերջին հիշված ընկերութեան տարեկան բյուջեն 1927 թվին կազմում էր 2,000,000 ո. վոսկով: Անգլիան նույնպես 1926 թ. ընդհանուր գործադուլից հետո սկսեց կազմակերպել կիսաֆաշիստական խմբեր «Հայթայթում» ա-

նոնով, վորոնք ունեն շտրեյկբրեյսերական և հակահեղափոխական նպատակներ ու խնդիրներ: Բացի հիշատակված ռազմական ընկերութիւններից, կապիտալիստական յերկրներում բնակչութեան ռազմականացման համար գոյութիւն ունեն զանազան մարմիններ: Ֆրանսիան ընդունել է զինվորական նոր որենք, վորի համաձայն «պատերազմի ժամանակ բոլոր ֆրանսիացիները և ֆրանսահայատակները, առանց սեռի և հասակի խտրութեան, պարտավորվում են մասնակցել յերկրի պաշտպանութեան գործին և նախատել նրա նյութական ու բարոյական ապահովութեանը»: Այսպիսով կապիտալիստները ձգտում են ամբողջ յերկիրը դարձնել մի մարտունակ բանակ, իրենց սեփական շահերը պաշտպանելու համար:

ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Ե ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Խորհուրդների համամիութենական 3-րդ համագումարը լարված ուշադրութեամբ լսելով հանգուցյալ Ֆրոնզեյի զեկուցումը, վորոշեց—«Անհրաժեշտ է ամենալայն կերպով տարածել ռազմական և ռազմա-քաղաքական գիտութիւնը բանվորների, գյուղացիների և հատկապես յերիտասարդութեան մեջ»:

Ինչո՞ւ համար է այդ անհրաժեշտ:

ա) Նրա համար, վոր Խորհրդային Միութեան բոլոր աշխատավորները, առանց բացառութեան, հարկավոր րոպեյին կարողանան զենքը ձեռքին պաշտպան կանգնել Հոկտեմբերյան նվաճումներին:

բ) Վորպեսզի կրճատվեն ռազմական ծախքերը,

վորպեազի հնարավոր լինի բանվորներին և գյուղացիներին վորքան կարելի յե քիչ ժամանակով կտրել խաղաղ աշխատանքից և բանակի շարքերը կանչել:

Կարմիր բանակի քանակը մեղանում կրճատված և մինչև 562,000 մարդ: Սա կազմում է ցարական խաղաղ ժամանակվա բանակի միայն մի յերրորդ մասը: Մեր յերկրի զինված ուժերի մեծ մասը փոխադրված է բնակազմերը, զինվորական խակական ծառայության կարճ ժամկետներով:

Մեր կարմիր բանակը խաղաղ շրջանում—դա այն կորիզն է միայն, վորի շուրջը պատերազմի ժամանակ համախմբվելու յեն բանվորա-գյուղացիական ամբողջ մասսաները:

Կարմիր բանակն իր ներկա քանակով—դա այն առաջապահ զորամասն է, վորը պետք է ընդունի թշնամու առաջին գրոհը: Իսկ հետագայում պատերազմում մասնակցութիւնն պետք է ունենա Միութեան ամբողջ աշխատավորութիւնը, բոլոր նրանք, ովքեր ընդունակ են զենք կրելու: Մեր թշնամիները քնած չեն, այլ տենդորեն պատրաստվում են: Նրանք անդադար մեր դեմ ուժեր են հավաքում: Դրա համար ել հասկանալի յե, վոր ամեն մի բանվոր և գյուղացի պետք է ուսումնասիրի ռազմական գործը և պատրաստ լինի հարկ յեղած բոպեյին խաղաղ քաղաքացուց ռազմիկ դառնալու:

Ռազմական տեխնիկան այժմս բազմատեսակ է և բարդ: Սակայն պատերազմում ամենից կարեւորն, այսպէս կամ այնպէս, մարդ-ռազմիկն է, իսկ նրա զենքերից գլխավորը հանդիսանում են հրացանը և զնդացիլը:

Այդ զենքերին տիրապետելը, նրանցով թշնամուն

ուժեղ և դիպուկ խփելը—անհրաժեշտ պահանջներից մեկն է, վորը պետք է դիտենա ամեն մի մարտիկ: Հրայանը անշնորհք և անկարող հրաձգի ձեռքին գնք չե, այլ ավելի շուտ ավելորդ բեռ:

Թշնամու համար հաճախ վտանգավոր են մի լավ հրաձիգը, քան մի քանի տասնյակ վատ հրաձիգները:

Տեսնելով այդպիսի հրաձիգների դատարկ, վոչ դիպուկ հրաձգութիւնը, թշնամին վոչ թե դադարում է նրանց դեմ պայքարելուց, այլ, ընդհակառակը, վոգեւորվում և և բարձրանում է նրա տրամադրութիւնն ու հավատը իր ուժերի նկատմամբ: Դրա հետ միաժամանակ, վատ հրաձիգներն անտեղի ծախսելով իրենց փամփուշտները, վատնում են ժողովրդական դուշը, թուլացնում են յերկրի տնտեսական հզորութիւնը, առաջացնելով ռազմամթերքի անտեղի վատնում: 1914—1918 թ. թ. համաշխարհային պատերազմի ժամանակ ամեն մի սպանվածի և վիրավորվածի վրա բաց է թողնված յեղել միջին հաշիւով 14 փութ արծիճ, կամ 24,000 դնդակ: Այդ նշանակում է, վոր ամեն մի 24,000 զնդակից կպել է միայն մեկը, իսկ մնացածները զնացել են անտեղի, աննպատակ: Կրակել սովորելու գործը հեշտ չե, նրա սովորելը հեշտ կլինի այնքան, վորքան ավելի ուժեղ ցանկութիւն և սեր կհայտնարեւրվի հանդեպ հրաձգութեան:

Բնականից չե, վոր լավ հրձիգներ են ծնվում, լավ հրաձիգ մեղանից ամեն մեկը կարող է լինել: Ահա թե ինչու Խորհրդային Միութեան բանվորները և գյուղացիները պետք է կպչեն ռազմական գործի ուսումնասիրութեանը, սովորեն լավ և դիպուկ կրակել: Այն յերկրներում, վորտեղ իշխանութեան գլուխը կանգնած են

կապիտալիստները, այսինքն մեր թշնամիները, վաղուց արդեն այդ հասկացել են և հրաձգության ուսումնասիրության գործը վաղուց արդեն սկսել են:

Նրանցից յետ չմնալու և հարկ չեղած բազելյին թույլ չլինելու համար, մենք պետք և ուժեղ թափով դարկ տանք հրաձգային գործի դարգացմանը և սովորենք դիպուկ կրակել:

ՏԵԽՆԻԿԱՆ ՅԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Առաջներում ասում եյին. «Ինչո՞ւ մենք վախենանք թշնամուց, քանի վոր մենք այնքան շատ ենք, վոր թեքնք կխեղդվեն»:

Այժմ, յերբ թշնամին հեշտությամբ կարող ե կրակել թնդանոթից մինչև 10—20 և նույնիսկ դեռ ավելի կիրժենալու, յերբ նա հնարավորութուն ունի սավառնակի օգնությամբ օգից վայր թափելու պայթուցիկ նյութեր և թունավոր գազեր, մենք, ինչքան ել վոր քանակով շատ լինենք, մերկ ձեռքերով թշնամուն վոչինչ անել չենք կարող. հարկավոր և մեզ ունենալ միջոցներ՝ նրան և՛ հեռու, և՛ մոտ տարածությունից խրփելու համար:

Այն բոլոր միջոցները, վորոնք հարկավոր են ամենաքիչ կորուստներով հաղթանակ տանելու համար, կոչվում են «ռազմական տեխնիկայի միջոցներ»:

ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացի պետք է այդ միջոցների մասին դադափար ունենա, վորպեսզի հասկանա, թե ինչ արժեք ունի ռազմական տեխնիկայի այս կամ այն միջոցը:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՎՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Այժմյան պատերազմները գործող զորամասերից պահանջում են զանազան տեսակի հատկություններ, դրա համար ել զորքերը լինում են զանազան տեսակի: Թվենք նրանցից ամենադժվարները—հետեակը, հեծելազորը, հրետանին, ճարտարապետական, զրահապատ, քիմիական, կապի զորամասերը և, վերջապես, ավիացիան: Զորքերի այդ ամեն մի տեսակը կարիք է ունենում ռազմական տեխնիկայի իր յուրահատուկ միջոցներին: Զորքերի այդ ամեն մի տեսակն ունի իր թե ուժեղ և թե թույլ կողմը:

Վորպեսզի հնարավոր լինի կապիտալիստների կողմից մեր վրա հարձակում գործելու դեպքում նրանց արագ և արժանի հակահարված տալ, անհրաժեշտ է զեռուստապատ ժամանակաշրջանում բարձրացնել մեր ռազմական պատրաստակալությունը, ընդգրկելով նրա մեջ աշխատավոր բնակչության լայն մասսաներին:

Պետք է հիշել, վոր ավիացիայի և քիմիայի լայն կիրառման շնորհիվ, թիկունքը, վորպես այդպիսին, ապագա պատերազմներում դադարում է գոյություն ունենալուց:

Պատերազմի այդ պայմանները կարող են ճակատներ ստեղծել այնտեղ, վորտեղ մի ալլ դեպքում ամենից քիչ կարելի չէր սպասել: Մեզ անհրաժեշտ է աշխատել զանազան դժերով—բանվորների, գյուղացիների, բանվորուհիների, զեղջիկուհիների, արդյունաբերության և հաղորդակցության աշխատավորների,



պահեստի պետկազմի, դորացրված կարմիր-բանակա-
յինների, յերկրային զորամասերի փոփոխական կազմի,
ուսանողների շրջանում և ամենուրեք, ուր կան կազ-
մեր, վորոնք կարող են ոգտադործվել ճակատում կամ
թիկունքում համաշխարհային կապիտալի հետ կռվի
բռնվելու դեպքում: Դրա համար ել բանվորները, վոր-
պես մեր յերկրի աշխատավորության ավանդարդ, սո-
վորում են հրացանը պինդ պահել իրենց ձեռքերում,
արագ կերպով իրենց արդյունաբերությունը դնել ռազ-
մական ուղիների վրա, վարժվում են զործարանները և
զբոյոգները պաշտպանել ինչպես ցամաքային, նույնպես
և ուղային-թիվական հարձակումներից: Չպետք է մո-
ռանալ, վոր կապիտալիստները մեզ վրա սկսած հենց
առաջին հարձակման ժամանակ կձգտեն խորտակել մեր
զործարանները, կամուրջները, տեխնիկական կառուց-
վածքները, ելեկտրոկայանները, հեռագրերը և այլն:
Շարունակ պետք է հիշել և յերբեք չմոռանալ լրտես-
ների, դավաճանների մասին, վորոնք պատրաստ են ի-
րենց յերկրի, իրենց ժողովուրդը ծախել միքանի տաս-
նյակ զոլլարներով, ստերլինգով կամ ֆրանկով: Գյու-
ղացիական միլիտնավոր մասսաների առաջ ևս դրվում է
նույն խնդիրը—սովորել պաշտպանելու իր խորհրդային
յերկիրը և հողը, Հեկտեմերյան հեղափոխության մեծ
նվաճումները: Կարմիր-բանակայինները և պահեստի
պետկազմը չպետք է մոռանան իրենց՝ զինվորական
ծառայության ժամանակ ստացած ռազմական դիտու-
թյունը, այլ, ընդհակառակը, պետք է աշխատեն լրաց-
նել այն նոր դիտելիքներով: Ռազմական տեխնիկան և
ռազմական դիտութունն անդադար առաջ են գնում:

Կարմիր բանակի շինարարության ամեն մի նոր նը-
վաճում պետք է հայտնի լինի արձակուրդավորին:

Շատ կարևոր է, վորպեսզի արձակուրդավորը—
դորացրված կարմիր-բանակայինը—կանոնավոր կապ
պահի իր նախկին զորամասի հետ, վորտեղից նա կարող
է ստանալ խորհուրդներ, ցուցումներ, ռազմական և
քաղաքական արժեքավոր գրականություն և այլն:

Պահեստի պետկազմը պետք է հիշի, վոր յերկրի
պաշտպանության նախապատրաստման և աշխատավո-
րության ռազմականացման գործում իր վրա ընկնում
է մեծ պատասխանատվություն—լինել ռազմական զա-
պափարների մասսայականացնողը և կիրառողը: Նա
պետք է լինի ռազմական գիտելիքներն ուսումնասիրող,
հրաձգային, սպորտային և այլ խմբակների առաջին
կազմակերպիչն ու պեկավարը:

ԻՆՉՈՒ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Աշխատավորության ռազմական պատրաստության
աշխատանքները տարվում են զանազան միջոցներով—
զինվորական զիտություններն ուսումնասիրող խմբակ-
ներ կազմակերպելու, աշխատավորական լայն մասսա-
ների ինքնազործունեյության կազմակերպման, նրանց
բոլոր տեսակի ռազմական վարժությունների մեջ քա-
շելու, Կարմիր բանակի պարապմունքներին և նրա զո-
ւելու, Կարմիր բանակի պարապմունքներին և նրա զո-
ւանկյուններ ստեղծելու, ցուցահանդեսներ, հրաձգային
մրցություններ, դասախոսություններ և գեկուցումներ
կազմակերպելու, այլ և Կարմիր բանակի տներին կից

հատուկ դասընթացներ կազմակերպելու և այլ ճանապարհներով:

Սակայն ի՞նչ պետք է ուսումնասիրել այդ խմբակներում: Ռադականապես պատրաստված լինելու և բանվորա-գյուղացիական հայրենիքն իմպերիալիստներին հարձակումներից պաշտպանելու համար, անհրաժեշտ է գաղափար ունենալ զորքերի հիմնական տեսակների, նրանց նշանակություն, հատկություն, նրանց կազմակերպման և մարտում նպատակահարմար կերպով օգտագործելու մասին:

Ի. ՀԵՏԵՎԱԿ

Ի. ՀԵՏԵՎԱԿԸ ԶՈՐՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆ Ե

Հետևալը հանդիսանում է ամենամեծաքանակ և զորքերի ամենահիմնական տեսակը՝ ինչպես մեզանում, նույնպես և բոլոր կապիտալիստական յերկրների բանակներում: Հետևակի հաղթությունը կամ պարտությունը վերջին հաշվով նախորդում է ամբողջ բանակի հաղթությունը կամ պարտությունը, հետևապես նաև ամբողջ յերկրի, վորովհետև հրետանու կրակից կարելի չէ ծածկվել, տանկերն ընդունակ են դրավելու, բայց նրանք ի վիճակի չեն պահելու և ամրացնելու այն, ինչ վրը դրավել են: Միայն հետևակի գործողությունն է վճռում մարտի բախտը, քանի վոր իր չարժույթներով և գործողություններով հետևակն ընդունակ է դրավելու տեղանքը և թշնամուն տակտիկական տեսակետից գնելու այնպիսի անելանելի դրություն մեջ, վորից դուրս գալու միակ միջոցն է՝ հանձնվել վորպես գերի, նահանջել, կամ ամբողջովին և վերջնականապես վրձնահալ: Զորքերի մնացած բոլոր տեսակները կարող են միայն ոժանդակել հետևակին այդ խնդիրների իրականացման համար: Հրետանին, հեծելազորը, ուղային և զրահապատ ուժերը, ճարտարապետական զորամասերը նյութապես և բարոյապես վորքան ել մեծ արժեք ունենան, այնուամենայնիվ յեթե անգամ նրանց վրձնացման և կորստի գնով է ձեռք բերվում մեր հետևակի

հաղթանակը և հակառակորդինի պարտությունը, միևնույն է՝ մարտը չափած և համարվում։ Ընդհակառակը, մարտը տարված պետք և համարել, յեթե հաղթանակում է թշնամու հետևակը։

«Վոչ մի հաղթանակ վճռական և հաջող չի լինելու, յեթե հետևակը նահանջի»⁹⁾, ինչպես նկատում է ռազմագետներին մեկը։

2. ՀԵՏԵՎԱԿԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հենց հետևակ անունը խոսում է այն մասին, թե իրենից ինչ է ներկայացնում զորքերի այդ տեսակը։ Հետևակը կազմված է հետիստն մարզկանցից, զինված է այնպիսի զենքերով, վորոնք մարտում տեղափոխվում են մարզկային ուժերով և ընդունակ են ինչպես հեռավից, նույնպես և մոտիկից ընդհարվելու դեպքում միաս հասցնելու թշնամուն։

Արգելքներ և խոչընդոտներ հետևակի համար դրված է զոյություն չունեն։

Լեռները, փոքր ճահճները, գետերը, անձրևը, ցեխը, մառախուղը, ցերեկը, գիշերը—վոչինչ նրան կանգնեցնել չի կարող։ Դրա համար և, վոր նա հանդիսանում է զորքերի այն միակ տեսակը, վորն ընդունակ է գործելու ամեն տեսակի պայմաններում՝ հարձակվել, պաշտպանվել, գրոհել թշնամուն, ամրանալ զրաված տեղանքում, կատարել հետախուզություն և այլն։ Հետևակի ամենափոքր մասերը, անգամ առանձին մարտիկները հնարավորություն ունեն նախապատրաստել կրակը և հարվածել սվինով, այսինքն, նրանք ըն-

դունակ են մինչև վարոչ աստիճան գործելու ինքնուրույն, անկախ զորքերի մյուս տեսակների ներկայացուցիչներից։

Յեթև հրետանին և տեխնիկական զորամասերը տիրապետում են շարժմանը և կրակին, հեծելազորը—շարժմանը և հարվածին, ապա հետևակը միակն է զորքերի բոլոր տեսակներից, վոր կարող է զործադրել զործողություն այդ բոլոր միջոցները—շարժումը, կրակը և հարվածը, առանց վորևե զժվարությունների, ամեն լուր անցնելով մեկից մյուսին, հարմարեցնելով այդ զործողությունները տեղին և պայմաններին։

Անկախությամբ գործողությամբ մեջ.—Հետևակի յերկրորդ արժեքավոր և դրական հատկությունը—համեմատած մյուս տակի զորքերի հետ, վորոնք իրենց զործողություններով կապված են ձիերի և մեքենաների հետ,—հանդիսանում է նրա անկախությունը և ինքնուրույնությունը իր զործողությունների մեջ։

Ձին հեծելակին շարժման և ուժեղ հարվածի հնարավորություն է տալիս, բայց նա միաժամանակ հանդիսանում է նրա թույլ կողմը, վորովհետև հեծելակին անմատչելի յե այն, ինչ վոր անմատչելի յե և ձիուն։ Հեծելակը վախենում է այն բոլորից, ինչից վախենում է ձին, հրաձգության դիպուկությունը ձիու վրայից չառ աննշան է, հեծելակների շղթան նկատելի յե թըշնամու համար, և նրանց զործողությունը մեծ չափերով կախված է յեղանակից, որվա ժամանակից (գիշեր և ցերեկ) յեղանակի դրությունից (չող, ձյուն, անձրև և այլն)։

Մեքենայի և նրա աննշան ջարդվածքների ու անկախությունների հետ ամենից ավելի կապված են հրե-

⁹⁾ Մորսորդ.—«Հետևակի տակտիկան» էջ 7։

տալորը, ողաչուն և ամեն մի մասնագետ, վորովհետև նրանց գործողութիւնը մեծ կախում ունի միջերման և լավ ճանապարհների դրութիւնից. միայն հետեակն և ընդունակ գործելու ամենուրեք, վորտեղ կարող և դրվել մարդկային վոտքը:

Համառութիւնը մարտում.— Հետեակը շնորհիվ իր ինքնուրույնութան, անկախութան և մյուս գործածականի հետ քիչ կապվածութան, կարող և մարտում ցուցահանել ամենից ավելի համառութիւն: Լավ պատկերացնելով իր առաջադրած նպատակը, լավ վարժված և կովել ցանկացող հետեակն ընդունակ և և կարող և ցուցահանել մարտում բացառիկ համառութիւն, վորպիսին անհասանելի յե գործերի մյուս տեսակներին: Հարձակման դեպքում հետեակը շարժվել և գործել կաբողջանալով ամեն տեսակի տեղանքում, տարվա և որվա ամեն ժամանակ, վարպետորեն ոգտագործելով անգամ ամենափոքր ծածկոցները և թաղստոցները, չնայած այժմյան տեխնիկայի կրակի ուժին, կարող և մոտենալ մինչև թշնամին և հարվածել նրան իր կրակով, ավինով և ուռնքով, նախապատրաստել գրոհ և կատարել այդպիսին, տիրանալ թշնամու գրոված վայրին, ամրացնել այն և յերկար ժամանակ պահել թշնամուց գրոված տեղանքը՝ չնայելով թշնամու հակադրոհին:

Պաշտպանութան դեպքում միայն հետեակն և ընդունակ պաշտպանելու Փրոնտը և վճռական մոմենտին հակահարված տալու կրակի և սվինի ուժով, իշիք դարձնելով թշնամու բոլոր ջանքերը, անկախ նրա տեխնիկայից և քանակապես գերազանց ուժերից:

3. ՀԵՏԵՎԱԿԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Տիրապետելով գործողութիւնի բոլոր յերեք միջոցներին—ինքնուրույնութիւնը, անկախութիւնը և համառութիւնը—հետեակն իր այդ ուժեղ կողմերի հետ միաժամանակ ունի նաև իր թույլ կողմերը:

Հետեակը շարժվում և դանդաղ: Ամենանպատակոր պայմաններում (հարթ ճանապարհ, լավ յեղանակ և այլն) նրա շարժման արագութիւնը մեկ ժամում 4—5 կիլոմետրից ավելի չի լինում, հետեակն նրա հետախուզութիւնը նեղ և և սահմանափակ, նա չի կարող թշնամուց նախազգուշանալ, նրա առաջխաղացումը կանգնեցնել տակտիկական և քաղաքական տեսակետից կարևոր նշանակութիւն ունեցող կետերում, հաջողութիւնը գործել թեւերում և թիկունքի խորքում և հետապնդել փախչող թշնամուն, նրան վերջնականապես ջարդելու նպատակով: Հետեակն ի վիճակի չե առանց հրետանու ոգնութիւն կովելու թշնամու հրետանու և գրահապատ ուժերի դեմ: Նա ամեն ժամանակ չի կարող միայնակ յոլադնալ և տեխնիկական բարդ խնդիրներ լուծել, ինչպիսիք են՝ քողարկումը, ամրութիւնների, կամուրջների հառուցումը, արհեստական մեծ խոչընդոտների դեմ կովելը և այլն:

Հետեակի ուժն անդադար պահպանում և և կարիք և զգում շարունակաբար լավ պատրաստված համարումների:

4. ՀԵՏԵՎԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետեակն ընդունակ և իրագործելու ամենաբարդ

և բազմաթիվ խնդիրներ: Սակայն այսօրվայ չի հետևում այն, վոր նա կարող է բոլոր տեսակի խնդիրները նույնութամբ և միտքինակ հետադարձությամբ իրադրոճել:

Պատահում են այնպիսի դեպքեր, յերբ մի շարք խնդիրներ հաջորդութամբ լուծվում են միայն հսկայական կորստի դնով, և կամ ել հետևակի մինչև ամենավերջին ջանքերի գործադրումով անդամ հաղթանակ ձեռք չի բերվում: Դրա համար ել պետերը և մարտիկները լավ պետք է լմանան, վոր հետևակին ամեն ժամանակ և ամեն դեպքում անհրաժեշտ է գործերի մյուս տեսակների ոժանդակութունը: Բայց պատերազմում յերբեմն պատահում են այնպիսի դեպքեր, յերբ հետևակին մնում է միայն իր ուժերով լուծել իր առաջ դրված բոլոր խնդիրները, հույս չդնելով գործերի մյուս տեսակների ոգնության վրա, վորովհետև այդ գործերը գուցե պահանջված ժամանակին չկարողանան ոգնության հասնել, կամ թե ժամանակը չի ներում սպասելու նրանց ոգնությանը: Հետևակը պետք է դիտենա, վոր նման դեպքերում նա կարող է և պարտավոր է խնդիրը լուծել իր սեփական ուժերով ու միջոցներով, կանոց չտանելով և վոչ մի զոհողության առաջ:

5. ՀԵՏԵՎԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հետևակի ամենալավ և նպատակահարմար ոգտագործման համար անհրաժեշտ է, վոր նա պատերազմի բոլոր պայմաններում կազմակերպված լինի իր տակառիկական հատկութունների և գործողութունների բնույթին համապատասխան կերպով:

Հետևակի կազմակերպումը պետք է առահովի նրա զեկավարության հարմարութունը, տեղադրությունների և տեղավորումների հնարավորութունը, ամեն տեսակի տեղանքում մարտ վարելու համապատասխան հնարավորութունները և այլն:

Այժմյան կրակի հզորութունն ստիպում է մարտի դաշտում գործել մարտական նոսր շարքերով, վորոնք կազմված պետք է լինեն փոքր խմբակներից: Վորպեսզի այդ խմբակները կարողանան թշնամուն հարվածել ուժեղ կրակով, նրանց կազմում պետք է լինեն զնդացիներ: Բացի այդ, հետևակի կազմում պետք է լինեն մի շարք փոքր միավորներ, վորոնք թույլ են տալիս նրան ինքնուրույն գործելու և իրեն առաջ դրված խնդիրները լուծելու դեպքում հույս ու չդնելու մյուս տեսակի գործերի ոգնության վրա:

Վերևում ասվածների հիման վրա, մեր հետևակ վաշտը կազմված է հինգ դասակներից (3 հրաձգային, 1 զնդացիրային և 1 վարչական դասակներից): Հրաձգային դասակը կազմված է 5 ջոկից, վորից 3-ը հրաձգային և 2-ը զնդացիրային:

Գնդացիրային դասակը կազմված է 2 հատուցավոր զնդացիրային ջոկից, վարչական դասակը կազմված է 4 ջոկից (փամփուշտակիրների, կապի, սանիտարական և տնտեսական ջոկերից): Ընդամենը վաշտում կա 8 զնդացիր, վորոնցից 5-ը հատուցավոր, իսկ 3-ը ձեռքի:

Հրաձգային գումարտակը կազմված է 3 հրաձգային, 1 զնդացիրային վաշտերից և գումարտակային հրետանուց ու կապի դասակից:

Գնդացիրային վաշտում կա 3 դասակ, ամեն մի դասակում 2 ջոկ և ամեն մի ջոկում 2 գնդացիր:

Գումարտակային հրետանու դասակի կազմում կա 2 ջոկ, վորից առաջինը՝ ականանետային և յերկրորդը՝ գումարտակային թնդանոթ:

Ընդամենը հրաձգային գումարտակում կա 30 գնդացիր, 1 ականանետ և մեկ թնդանոթ:

Հրաձգային գունդը կազմված է գնդի շտաբից, քիմիական դասակից, գումարտակային հրետանուց և գնդային հրետանու բաժնյակից, 3 հրաձգային գումարտակներից, քաղաքական, տնտեսական, սանիտարական, անասնաբուժական մասերից և ակումբից: Գնդային հրետանու բաժնյակը կազմված է 2 մարտկոցից, ամեն մի մարտկոցը 3 դասակից (մարտկոցում կա 3 թնդանոթ):

Ընդամենը գնդում կա 90 գնդացիր, գնդային հրետանու 6 հրանոթ, գումարտակային 3 թնդանոթ և 3 ականանետ:

6. ՀԵՏԵՎԱԿԻ ՍՊԱՌԱԶԻՆՈՒՄԸ

Հետևակի զենքն իր նշանակությամբ բաժանվում է յերկու հիմնական խմբերի. ա) անձնական զենքեր՝ կազմված առանձին մարտիկների սպառազինումից, և բ) խմբական զենքեր՝ կազմված առանձին միավորների սպառազինումից:

ա) Անձնական զենքեր. — Դա յերեք գծանի (1891 թ. ձևի) արագաձիգ, սրածայր փամփուշտով և սվինով հրացանն է, վորը հանդիսանում է անձնական մարտական սպառազինումն, գլխավորապես հրաձգային ջոկերի մարտիկների համար:

Հրացանի նշանակության հեռավորությունը 3·200 քայլ է, իսկ վերջնական հասցությունը՝ մոտավորապես 5·500 քայլ:

Միայնակ կրակի դիպուկությունը հնարավոր է մինչև 600 քայլ հեռավորության վրա, իսկ խմբակային կրակինը՝ մինչև 1·200—1·400 քայլ հեռավորության վրա: Հեռավոր տարածության վրա թշնամուն վնասելու նպատակով սկսած հրաձգությունը պետք է լինի առնվազն դասակային:

Հրացանն իր սվինով հանդիսանում է նաև բռնամարտի զենք, վորն առանձնահատուկ նշանակություն ունի զիջերային մարտում, ուր սվինը գլխավոր զենքն է, վորովհետև զիջեր ժամանակ հրացանով կրակելը շատ դժվար է: Հրաձգության արագությունը վարժված և կարգապահ մարտիկի համար, առանց ի վնաս դիպուկության, կարող է հասցվել 10—12 ձիգի մի րոպեյում: Հրացանի թեթև քաշը (մոտավորապես 10 և կես ֆունտ սվինով) թույլ է տալիս հրաձգին ազատ շարժվելու ինչպես քայլով, նույնպես և վազելով, ոգտագործել հրացանը մարտական դրության այլ և այլ պայմաններում: Հրացանը, ի նկատի առնելով նրա վերևում հիշված մարտական հատկությունները, հանդիսանում է հետևակի հիմնական և կարևոր զենքը, վորը կարող է և պետք է փոխարինի բոլոր տեսակի զենքերին, յերբ զենքի մնացած տեսակները բացակայում են կամ հրաժարվում են դործելուց:

Բացի հրացանից, մարտիկն իր մոտ ունի նաև ձեռքի նռնակ:

Ձեռքի նռնակի զերն է—վոչնչացնել թշնամու գնդացրային և հրաձգային բները, լարավաղոցները,

ցանցերը, նրա վրա հեղու և մոտ տարածությունից անմիջական դրոշ տալու դեպքում, ինչպես նաև խրամատների ամրաշենների յետևում տեղավորված կամ խրամուղիներում ծածկված թշնամու կենդանի ուժերը: Ձեռքի նոնալները հատկապես ուժեղ ներգործություն են ունենում թշնամու քաղաքա-բարոյական զբաղմունքի վրա, ինչպես գիշերային, նույնպես և ցերեկվա դրոշի դեպքում, խրամատներում, բնակավայրերում, թաղստոցներում և շենքերում տարվող մարտի ժամանակ: Ձեռքի նոնալները գործադրվում են գլխավորապես և մեծ մասամբ մարտի վճռական մոմենտին:

Հետևակի պետկազմը և այն կազմի բանակայինները, վորոնք չունեն հրացաններ, ղինված են «նաղան» սխտեմի ստրճանակով և բրաունինգով:

բ) Խմբակալ զինվոր: Ձեռքի «Լույիս» սխտեմի զենքացիքը.— Ձեռքի զենքացիքը հանդիսանում է մոտ և միջին տարածության վրա գործածելու զենք: Նրա կրակի իսկական հասողությունն է մինչև 1500 մետր: Նրանով սպառազինված են հրաձգային գասակների յերկրորդ ջոկերը: Գնդացրի քաշն է մոտավորապես 30 ֆունտ, նշանատու թյան հեռավորությունը 2400 քայլ: Անդալար հարձադու թյան արագությունն է մինչև 500 ձիգ մի րոպեյում, բայց այնքան, վորքան նրա պահետատու թր տեղավորում է բնդամենը 47 փամփուշտ, դրա համար էլ նրա հրաձգության ամենարարձր արագությունը պետք է հաշվել 250 ձիգ:

Ձեռքի զենքացիքի հիմնական պարտականությունն է— հետևել հրաձիգներին և նրանց համար ճանապարհ հարթել, կրակ մղելով թշնամու զենքացիքային և կրակային այլ միջոցների դեմ, վորոնք խանդարում են մեր

հրաձիգներին հասնելու իրենց առաջադրած նպատակներին:

«Մաքսիմի» սխտեմի հաստացավոր զենքացիք.— Ամբողջ սխտեմի քաշն է 4 փ. 19 ֆունտ: Կրակը ավտոմատ է, հրաձգություն արագությունը մինչև 500 ձիգ մի րոպեյում, նշանատու թյան հեռավորությունը—



Նկ 2. Կրակ սավառակի զենք

մինչև 3500 քայլ: Փամփուշտները դասավորվում են ժապավենին 250-ական հատ ամեն մեկի վրա: Իր կրակի ուժով նա կարող է փոխարինել— առանձնապես պաշտպանության նպատակով պայմաններում 40—50 հրաձիգների:

Միջին և մոտիկ տարածության վրա կրակի հասողությունը և գիտությունը բարձր է, իսկ հեռու տարածության վրա բավարար, խմբային զենքացիքներով հրաձգություն կատարելու դեպքում կրակի ուժը շատ զգալի է և ավերիչ: Հաստացավոր զենքացիքը կարող է կրակ բռնալ նույնիսկ իր զորամասերի գլխի վրայով:

7. ԳՈՒՄԱՐՏԱԿԱՅԻՆ ՀՐԵՏԱՆԻՆ

Մարտի սկզբում հետեակն առաջ և շարժվում դիվիզիայի հրետանու ոգնությամբ, սակայն վերջինս հարկադրված կլինի դադարեցնելու իր կրակը այն մոմենտին, յերբ հետեակ զորամասերն այնքան են մոտեցել թշնամուն, վոր անհնարին կլինի այլևս տարբերելու իր զորամասերը թշնամու մասերից: Մինչդեռ հետեակը հատկապես մարտի այդ փուլում և, վոր կարիք և զգում հրետանու կրակին, թշնամու դանազան կառուցումները, խրամատները, շենքերը խորտակելու և գնդացիներն ու փոքր թնդանոթները վռնելացնելու համար: Այնքան, վորքան այդ բոլորը չի կարելի հրաշանով և գնդացրով կատարել, դրա համար ել հետեակին ամբացվում են դումարտակային հրանոթներ: Այդ հրանոթների ճկունությունը, նրանց մեծ դիպուկությունը և հետեակին հետևելու ընդունակությունը նրանց դարձնում և հետևակի ամենահզոր զործակիցը մոտիկ տարածության վրա թշնամու կրակային միջոցների դեմ կռվելու համար: Գումարտակային հրանոթներն սպասարկում են ամբողջ դումարտակի կամ մի վորևե վաշտի տեղամասին, ստանալով համապատասխան հրամատարներից ինչպես կրակի նպատակը, նույնպես և տեղավորման չրջանը:

Գումարտակային «մոզեներբզեր» սխտեմի թընդանոթի տրամաչափն և 37 միլիմետր, ամբողջ սխտեմի քաշն և 11 փուլ, հրաձգության հասողությունը՝ 2—3 վերստ, հրաձգության արագությունը՝ մինչև 8 ձիգ մեկ բուլետում:

II. ՀՐԵՏԱՆԻ

1. ՀՐԵՏԱՆՈՒ ԴԵՐԸ ՅԵՎ ՆՇԱՆԱԿԻԹՅՈՒՆԸ ԱՅԺՄՅԱՆ ՄԱՐՏՈՒՄ

Կրակի նշանակությունն աճում և տարեցտարի և ամսե-ամիս: Ամեն մի նոր հայանություն տեխնիկայի բնագավառում, վորն ուժեղացնում և կրակի հզորությունը և հասողությունը, հրետանին դարձնում և ավելի մահացու, հետեակն նաև ուժեղացնում և նրա ազդեցությունը մարտի վախճանի նկատմամբ: Զորքերի բոլոր տեսակներն ունեն կրակի միջոցներ, սակայն ամենից հզորն այդ անպարիզում հանդիսանում և հրետանին. միայն կրակով գործելու հնարավորություն ունենալով՝ նա հանդիսանում և կարծես կրակի մարմնացումն:

Տեխնիկայի զարգացման հետևանքով ամենից զգալի չափերով աճում և կրակի ամենահզոր տեսակը—հրետանու կրակը: Հրետանու կրակի պատճառած կորուստը հատկապես աճեց համաշխարհային վերջին պատերազմի ընթացքում:

Հրետանու նշանակությունն արտակարգ կերպով բարձրացել և: Հետեակի և հրետանու գործողությունը մարտում անբաժանելի յե: Հրետանու խնդիրն է՝ վորքան հնարավոր և ամբողջությամբ վերացնել թշնամու ստեղծած խոչընդոտները, վորպեսզի հետեակը կարողանա առաջադրված մարտական խնդիրը լուծել ամեն

հանձնագի կորստով: Հրետանու դերը մարտում կայանում է նրանում, վոր վոչնչացնի և բարոյապես ճնշի թշնամու կենդանի ուժերը և քայքայի իր զորքերի շարժման ճանապարհին յեղած բոլոր արգելքներն ու խոչնդոտները: Այստեղից ել յենելով՝ հրետանու գործողութիւնը մեծ մասամբ պետք է բնորոշվի հետևակին ոժանդակութիւն ցույց տալու տեսակետից:

2. ԱՅԺՄՅԱՆ ՀՐԵՏԱՆՈՒ ՀԱՏԿՈՒՅՑՈՒՆՆԵՐԸ

Հրետանու մարտական ուժը նրա կրակի և շարժման մեջն է: Կրակը հեռավորութեան վրա հարվածում է թշնամու կենդանի ուժերին, ցնցում է նրա ներկերը, քայքայում է նրա բարոյական ուժը և դրա հետ միաժամանակ բարձրացնում է իր զորքերի տրամադրութիւնը, ամրացնելով նրանց հաւատն ու համոզմունքը իրենց սեփական ուժերի նկատմամբ: Հրետանին իր կրակով անպետքացնում, շարքից դուրս է հանում թշնամու կրակի միջոցները, քայքայում է նրա պաշտպանութեան կառուցումները, վորոնք արգելք են հանդիսանում իր զորամասերի շարժմանը և ստեղծում է կրակի մի վարագույր, վորի տակ ծածկված յուր հետևակը հարվածում է թշնամուն:

Հրետանին շարժման ժամանակ անոգնական է:

Հրետանին ընդունակ է առանց հետևակի ոգնութեան թշնամու դիրքերը զերեզմանատուն դարձնելու, րոյց նա այն ժամանակ միայն կարող է իր զրաւած դիրքերն ամրացնել, յերբ այդ դիրքերին կտիրապետի հետևակը: Այդ պատճառով ել, չնայած այժմյան հրետանու մեծ նշանակութեանը, նա չի կարող լինել զորքի ինքնուրույն տեսակ:

III. ՀԵՄԵԼԱԶՈՐ

I. ՀԵՄԵԼԱԶՈՐԻ ԴԵՐԸ

Քաղաքացիական կռիւների փորձը ցույց տվեց, վոր հեծեալազորը կարող է զորքերի ինքնուրույն տեսակը հանդիսանալ, թեև նա իր նշանակութիւնը կորցրել էր համաշխարհային պատերազմի ընթացքում:

Տեխնիկայով հագեցված լինելու տեսակետից զորքերի մյուս տեսակներից յետ չմնալու համար, հեծեալազորը նույնպես պետք է յենթարկվի մեքենայացման: Հեծեալազորը կատարում է և հեռավոր և մոտավոր հետախուզութիւն: Չնայած ողանալատորմի աճման, հեծեալազորի դերն ու նշանակութիւնը չի նվազել: Հեծեալազորը և ողանալատորմը մեկը մյուսին լրացնում են: Հեծեալազորն ավելի մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում քան ողանալատորմը:

Զորահալաքի ժամանակ հեծեալազորը ծածկում է ուժանդակում և բանակի շարժումները: Հեծեալազորը կրակի բոլոր տեսակների նկատմամբ ամենազգայունն է և իր ողտադործման մեջ պահանջում է համախմբվածութիւն և միասնութիւն: Նա անհաջողութեան դեպքում արագ կերպով քայքայվում է և դժվարութեամբ վերականգնվում:

2. ՀԵՄԵԼԱԶՈՐԻ ՀԱՏԿՈՒՅՑՈՒՆԸ

Հեծեալազորի հիմնական հատկութիւնն այն է, վոր նա, հետևակի հետ համեմատած, ավելի արագ է շարժ-

վում: Նա ընդունակ և ավելի ուժեղ հարված հասցնելու
ուսուն զենքով: Բարոյական ուժեղ ազդեցություն և
թողնում թշնամու վրա՝ նրա թևերում և թիկունքում
կատարած իր սրբաշավ հարձակումներով:

Սրա հետ միաժամանակ հեծելազորը տեղանքից,
ժամանակից և տարվա յեղանակից ավելի մեծ կախում
ունի, քան հետևակը:

Պատերազմի ժամանակ հեծելազորը, իր կազմի
բարդություն հետևանքով, ավելի շատ և յենթակա զբ-
վարությունների և զրկանքների քան հետևակը: Իր կա-
րիքների անկանոն բավարարման դեպքում հեծելազորը
յենթակա յե կազմավորվում:

3. ՀԵԾԵԼԱԶՈՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հեծելազորը հիմնվելով իր հիմնական հատկու-
թյունների վրա և ոգտադործելով տեխնիկական մի-
ջոցները՝ կարող և իրադործել բազմապիսի խնդիրներ:
Հեծելազորի խոշոր ուժերն ոգտադործվում են բարձր
հրամատարություն կողմից:

Հեծելազորի հիմնական խնդիրներն են՝

1) Պատերազմի սկզբում, բանակի ծավալման և զո-
բահավաքի չրջանում հեծելազորն ուղարկվում և սահ-
ման՝ ծածկելու այդ գործողությունները մինչև նրանց
վերջանալը, այլև թշնամու զորահավաքի և ուժերի ծա-
վալման գործողություններին արգելք հանդիսանալու
համար:

3) Հայտնաբերելով թշնամու մոտեցումը, հեծե-
լազորն սկսում և գործել նրա թևերում և թիկուն-
քում:

3) Մարտի հաջող ծավալման դեպքում հեծելազորը
հետադուր և ջարդված և փախուստի դիմող թշնա-
մուն:

4) Մարտի անհաջող վախճանի դեպքում հեծելա-
զորը պաշտպանում և մեր զորքերի նահանջը:

4. ՀԵԾԵԼԱԶՈՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կարմիր բանակում հեծյալ գունդը կազմված և
գնդի շտաբից, 5 հեծելավաշտից (վորից 4 թրավաշտ և 1
զնդացրային), սանիտարական և անասնաբուժական
մասերից, քիմիական ծառայությունից և ակում-
բից:

Հեծելավաշտը կազմված և 4 դասակից, դասակը՝
2 ջոկից: Գնդացրային դասակը կազմված և 4 ջոկից:

5. ՀԵԾԵԼԱԶՈՐԻ ՍՊԱՌԱԶԻՆՈՒՄԸ

Հեծելազորի գործողությունից հիմնական միջոցը
թշնամուն հեծյալ շարքով հասցրած շրմեցուցիչ հար-
վածն և, սակայն այժմյան պատերազմի պայմաննե-
րում հեծելազորի համար հաճախ ստեղծվում են այն-
պիսի պայմաններ, յերբ նա այդ հարվածը թշնամուն
պետք և հասցնի խառն շարքով:

Հետևապես հեծելազորի կուլի յերկու միջոցն և,
այսինքն ձիու վրա և հետիոտն, տարվում են վուչ մի-
այն հեծելակներին ջանքերով, այլ հեծելազորին տված
տեխնիկական միջոցների ոժանդակությամբ: Դրա հա-
մար ևլ հեծելազորի սպառազինումը կատարվում և այն-
պես, վոր հեծելակը կարողանա գործել թե ձիու վրա

և թե հետիոտն: Հեծելակը ձիու վրա սպառազինված
և թրով, ատրճանակով և նիզակով, իսկ հետիոտն գոր-
ծելու համար հրացանով և նռնակով: Հեծելագորային
մասերը, նախժ իրենց մեծության, ունեն զանազան տե-
սակի և մեծության հրանոթներ:

IV. ՈՂԱՆԱՎԱՏՈՒՄ

Թշնամուց հարձակում կարելի չե սպասել վա-
ժխյն ցամաքից, այլև ողից: Ողում պաթքարելու հա-
մար ողտվում են սավառնակներից և ոգապարիկներից:

Սավառնակներն իմպերիալիստական և քաղաքացիա-
կան կոիվների ժամանակ խոչոր ուժ հայտնաբերեցին:
Կարելի չե ասել՝ նա, ով իր սավառնակներով ուժեղ
կլինի, կհարկադրի թշնամուն թե՛ ողում և թե ցա-
մաքի վրա անախորժություններ կրելու: Պատերազմի
համար պատրաստի քանակով շատ սավառնակներ ունե-
նալը ձեռնտու չե, վորովհետև ամեն տարի հանդես են
գալիս սավառնակների և մոտորների նոր ձևեր, հետե-
վապես, յերբ սավառնակը 5 տարի պահեստում կանդ-
նած մնա, նա արդեն հնացած է: Դրա համար անհրա-
ժեշտ է խաղաղ ժամանակ կառուցել գործարաններ,
վորպեսզի նրանք պատերազմի սկզբում անմիջապես
եկան արագությամբ բաց թողնել նոր սավառնակներ և
մոտորներ: Նմանապես դժվար է ապահովվել լավ, վո-
րակով բարձր ողաչուններով: Բուրժուական պետու-
թյուններում անբարեհույս մարդկանց ողաչուններ չեն
նշանակում: Ողաչուն իր աշխատանքները կարող է չա-
րունակել ընդամենը 4—5 տարի (վորովհետև առողջու-
թյունը և հատկապես սիրտը յերկար չի դիմանում),
իսկ վորպեսզի հնարավոր լինի ողաչուններ պատրաստել,
հորկավոր է յերկու-յերեք տարի:

Նշանակում է գործը պետք է այնպես դնել, վոր պատերազմի համար պատրաստվեն վոչ միայն նոր սավառակներ, այլև ողաչուններ, իսկ սա ավելի դժվար է: Մոտորներն աշխատում են զտված բենզինով, բենզինը հարկավոր է բոլոր ինքնաշարժների և գործարանների ու ֆաբրիկների մոտորների համար: Այս ել նոր դժվարություն է: Ֆրանսիացիներն իրենք նավթ չունեն, նշանակում է պատերազմի ժամանակ յեթե Ամերիկան, Անգլիան կամ Ռուսիայան նավթ չտան, նրանք կարող են մնալ առանց բենզինի:

Այդ տեսակետից խորհրդային Միությունը, ընդհակառակը, գտնվում է միանգամայն նպաստավոր պայմաններում:

Սավառակները լինում են դանդաղ տեսակի, նայած ինչ խնդիրներ են դրվում նրանց վրա: Լինում են կործանիչ, ուժաձիգ սավառակներ: Կան նաև հետևակային, հեծելազորային ու հրետանուն սպասարկող սավառակներ: Հասկանալի չե, յուրաքանչյուր տեսակի սավառակին հարկավոր է յուրահատուկ վորակ: Հետախույզ սավառակները լինում են ե՛ւ հեռու ե՛ւ մոտ տարածություն վրա աշխատելու համար: Առաջինները մեկ ժամում կտրում են 200 կիլոմետր տարածություն: Ներքինք թռչում են 7—8 կիլոմետր բարձրության վրա և տնեն բենզինի մեծ պաշար (4—6 ժամվա համար): Ներքինք պետք է մյուսներից դիմացկուն և զնդացիներով լավ սպառազինված լինեն: Մոտ տարածություն և քիչ բարձրության վրա թռչողները կարող են լինել համեմատաբար վատ վորակի: Հակառակորդի սավառակների հետ կռվող կործանիչ ոդանավերը պետք է լինեն առաջընթաց (250 կիլոմետր մեկ ժամում), կարողանան

թռչել մեծ բարձունքների վրայով (մինչև 10 կիլոմետրը), 4—5 կիլոմետր բարձրանալ 10 րոպեյի ընթացքում, լինեն թեթև, ճկուն, չըջաղարձ թռիչքի ժամանակ: Ռմբակիր ոդանավերը պետք է տանեն խոշոր քանակի ծանրություն. ցերեկները թռչողների համար պետք է մեծ արագություն և բարձրություն, քիչ բեռ, իսկ գիշերը թռչողների համար ընդհակառակը: Ներկայումս կան ուժակիր ոդանավեր, վորոնք բարձրացնում են



Նկ. 3. Սավառակի գնդակոծումը հաստոցավոր զնգացքով մինչև 500 մետր ողողակար ծանրություն: Ինչ վերաբերում է ուղմբերին, պետք է ասել, վոր այժմս կան ամեն

մեկը 125 փթի ծանրությամբ ուռնակներ: Մյուս սավառնակները սովորաբար լինում են հնացած ձվերից: Բայց էան նաև հերոսներ, վորոնք ոգից հարձակվում են զորքի վրա և զնդացիրներով խփում են նրանց 300—400 մետր բարձրությունից: Նման սավառնակները գնդակների ծովայններից պաշտոնավելու համար զբաղապատված են և ուժեղ կերպով սպառազինված են գնդացիրներով:

Իմանալու համար, թե վորտեղից կարելի չե սղատել սավառնակների հարձակումը բնակչության վրա, պետք է յեղնել մոտավորապես հետևյալ դրություններից:

Ռմբակիր սավառնակի թռչելու տեսչությունը միջին թվով պետք է հաշվել 8—10 ժամ: Ռմբակիր արագնթացությունը միջին թվով պետք է հաշվել 160—180 կիլոմետր մեկ ժամում. նշանակում է սավառնակն առանց ընդմիջումի յետ ու առաջ կարող է թռչել 1800 կիլոմետր: Այլ կերպ ասած, պատերազմն սկսվելու դեպքում միանգամայն հնարավոր է, վոր սավառնակները թռչեն սահմանին մոտ շրջանները, 800—900 կիլոմետր խորքում, և այդ շրջաններում է, վոր պետք է միջոցներ ձեռք առնել սավառնակների դեմ կովող թընդանոթների, իսկական, բայց քողարկված կառուցվածքներ պատրաստելու միջոցով ապահովել կարևոր կետերը: Քիչ կարևոր նշանակություն ունեցող տեղերից հարկ չկա վախենալու:

Ներկայումս կան սավառնակներ, վորոնք 80-ից մինչև 100-ական մարդ են բարձրացնում:

Սավառնակներն ունեն այն կարևոր պահասությունը, վոր նրանք կապված են այերողությունների հետ: Սավառնակի համար հարկավոր է ուղիղ և հարթ վայր

իջնելու և բարձրանալու համար, վորի շրջակայքում չպետք է լինեն բարձր տներ, ծառեր և հեռախոսային թելեր, վորոնցից սավառնակը բարձրանալու և իջնելու ժամանակ կարող է փչանալ: Այդպիսի հրապարակներ պատրաստվում են նախորդ մեծ դժվարություններով: Յեթե հակառակորդը չունի նման հրապարակներ, այն դեպքում սավառնակներով փոխադրած իր զորամասերին շատ դժվար և վտանգավոր է իջեցնելը:

Քանի վոր տեղանքը գրեթե միշտ լինում է բազմատեսակ, և բացի այդ հակառակորդի սավառնակները պետք է իջնեն մեր տերիտորիայի վրա, վորտեղ թռչնամիտ հնար չունի նախորդ, դեռ խաղաղ ժամանակ նման հրապարակներ նախապատրաստել, ապա կարելի չե ասել, վոր սավառնակներով զորքեր տեղդափոխելը թեպետ ընդհանրապես հնարավոր է, սակայն և միայն ժամանակ կասկածելի չէ:

և
սն

Վ. ԶՐԱՀԱՊԱՏ ՄԱՍԵՐ, ՆՐԱՆՑ ԴԵՐԸ, ԶԱՐ- ԳԱՅՈՒՄՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կրակի գործողության ուժեղացման համար տեխ-
նիկայի կատարելագործումն ուղտագործելու ձգտումը
հարվածային կերպով առաջ բերեց զրահապատ մասերի
մարտադաշտ հանելու անհրաժեշտությունը: Զրահա-
պատ զորամասերն ունեն հ' դրական և' բացասական
կողմեր:

Զրահապատ զորամասերի դրական կողմերն են. —
տեղափոխության արագությունը, մարտի շրջանում,
թույլ և յերբեմն ել ամբողջապես անվտանգությունը
գնդակներից և արկերի մնացորդներից: Կենդանի թե-
րով զրահապատ մասերի գերի վերցնելու անհնարու-
նությունը: Զրահապատ մասերի մարտադաշտում յե-
րևալը բարոյական ուժեղ ազդեցություն է թողնում
հակառակորդի, հատկապես տեխնիկապես հետամնաց
հակառակորդի վրա:

Բացասական կողմերն են. — քիչ քանակությամբ
վառելանյութ և զենքեր կրելով իրենց մեջ, մեքենա-
ները չեն կարող յերկար ճանապարհորդել և յերկար
ժամանակով չարժուժներ կատարել: Դրա համար ել
նրանց գործունեությունը ժամանակի տեսակետից
սահմանափակված է:

Զրահապատ մեքենաները քողարկման դժվարու-
թյան և թշնամու կողմից աչքի ընկնելու հետևանքով

իրենցից լավ նշան են ներկայացնում: Մեքենաների
չարժման ժամանակ նրանց կրակը քիչ է գործոն: Գիշե-
րային գործողության համար զրահապատ ուժերն այն-
քան ել պետքական չեն և ուժեղ կախում ունեն տե-
ղանքից, խճուղուց և յերկաթուղու ճանապարհներից:
Վատ ճանապարհներից տանկերի մեխանիզմը շուտ փը-
չանում է, այդ պատճառով նրանց գործունեությունը
մեծ չափով սահմանափակված է:

Մանրամասնորեն կանգ առնենք մեքենաների հիմ-
նական տեսակներից տանկերի վրա, վորպես զրահամա-
սերի ամենից շատ տարածված տեսակի:


Տանկերը յերևան յեկան համաշխարհային պատե-
րազմի յերկրորդ կեսին, 1916 թվին, և նրանց մարտա-
կան աշխատանքի առաջին իսկ փորձը ցույց տվեց ան-
գլխացիներին, վոր տանկերը ճակատում գործերին մեծ
հզորություն կարող են տալ: Տանկերի կառուցումը,
սկսած այդ ժամանակներից, լայն թափով առաջ գնաց:
Ահա տանկերի զարգացման թափի մի քանի թվեր. —
1916 թվի սկզբին Անգլիան ուներ 150 տանկ, 1917 թը-
վին՝ 1,100 տանկ, իսկ 1918 թ. վերջին՝ 2,000 տանկ:
Գանի գեո գերմանացիները տեղեկություն չունեին
տանկերի մասին, տանկերը մեծ հաջողություն ունեյին:
Բայց յերբ տանկերի կառուցումը և նրանց մարտական
հատկությունները հայտնի դարձան գերմանացիներին,
անգլիական տանկերն սկսեցին դժվարությամբ յերևան
գալ, վորովհետեւ գերմանացիները տանկերի թույլ
կողմերը գտնելով՝ սկսեցին տասնյակներով և հար-
յուրներով նրանց վռնելացնել:

Տանկերը միշտ պատրաստ են գործելու համար:
Մարտական պարագայում տանկերը միշտ իրենց հետ

սենեկներն են բնիկների պաշար մատուրի համար և փամ-
փուշտներ թնդանոթների ու գնդացիքների համար։
Տանկերին սպասարկող մարտիկները միշտ տեղավոր-
վում են տանկերի կողքին։

Հարկավոր է միայն «մարտի պատրաստ» հրաման
կամ ազդանշան տալ, և 3 բուլեյից նրանց մատուրները
կգործեն, մարդիկ կնստեն նրանց վրա, և տանկերը
կսկսեն աշխատել, վորտեղ նրանց կհրամայեն։

Հասարակ գնդակներն ու արկերի փշխանները չեն



Նկ. 4. Տանկը յերթում

կարող ծակել և անցնել նրանց զրահը։ Միայն զրահին
ուղիղ կաշող արկերը կարող են ծակել և հետագա ծա-
ռալուծյան համար անպետք դարձնել տանկերը։ Տանկը
մեծ տարածություն է անցնում։ Տանկերը կարող են
սողալ խրամատների միջով, վերացնում են լարավա-
կոցները, քանդում են կեսից մինչև մեկ արշին հաստու-
թյուն ունեցող քարե պատերը, անցնում են մեկ արշին
խորութեամբ գետերով և կարող են անցնել բոլոր այն
հասիճներով, վորոնց վրայով կարող են անցնել մար-

դիկ։ Բացի այդ, տանկը զգալի է հետևագրել կամ
հեծելադորի կենդանի ուժերով վերցնել։ Դրա համար էլ
տանկի թույլ կողմերին անձանոթ զորամասերի համար
նա ահավոր է և այդպիսի զորամասերում առաջացնում
է խուճապ։

Տանկերը չեն կարող յերկար ժամանակով կարել
իրենց բազայից, այսինքն տանկին վառելանյութ և
հրադաշար տվող պահեստից։ Տանկն իր պահեստից 10
—15 կիրոմետրից հեռու գնալ չի կարող, հակառակ դեպ-
քում նա կմնա առանց բնիկների և փամփուշտների,
և նրան հեշտ կլինի գերի վերցնելը։ Տանկերի մեխա-
նիզմը չի գլխավորում հեռավոր անցումների, ուստի
և տանկերը հեռավոր անցումներն անում են յերկաթու-
գային կառավարողների, նույնպես մեծ բեռնատար
ավտոմոբիլների վրա։ Այսպիսով տանկերը կապված են
յերկաթուղու ճանապարհների հետ։ Ուստի և այնտեղ,
ուր կա և մտ է յերկաթուղու ճանապարհը, հնարավոր
է հակառակորդի տանկերի յերևան դալը։

Տանկերի ամենամեծ պակասությունն այն է, վոր
նրանք գանդաղաշարժ են. —յերթում մեկ ժամում ան-
ցնում են 10—12 կիրոմետր, իսկ մարտում՝ 1—5 կիրո-
մետր մեկ ժամում։ Տանկերը մարտի մեջ յերկար մնալ
չեն կարող, վորովհետև նրանց մարտական պաշարն
աննշան է։

Տանկը զիտելու շատ փոքր ճեղք ունի, և դրա համար
էլ նա հեշտ է ընկնում թակարդի մեջ։

Վերջապես տանկի հրետանու (և) գնդացրային կրակի
զիպկությունը նրա շարժման ժամանակ աննշան է։

Տանկերն իրենց ուժերով չեն կարող գրավել վորևե
մի տեղամաս։ Այդ նպատակի համար նրանց վրա շատ

քիչ մարդկային ուժեր կան (վորք տանկի վրա կա 2 հոգի, իսկ մեծի վրա՝ 7-12 մարդ) : Բայց չնայած, վոր պանկերը հարձակվում են, սակայն հետևակը պետք է տնպայման հետևի նրանց, վորպեսզի ամբողջապես և ամուր պահի այն տեղանքը, վորտեղ վոր անցնում են րանկերը:

VI. ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ԲԻՄԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Քիմիական պատերազմի հիմնական զենքերը հանգիսանում են թունավորող նյութերը, այսինքն քիմիական այն նյութերը, վորոնք ունեն սեփական հարվածող ուժեր, այլ կերպ ասած՝ վորոնք իրենց անմիջական ներդրածությամբ վոչնչացնում կամ շարքից հանում են հակառակորդին: Քիմիական պայքարն ամբողջապես պարփակում և իր մեջ և՛ հարձակման և՛ պաշտպանության ելեմենտները:

Համաշխարհային պատերազմի ընթացքում գերմանացիները գործադրում էին գրգռող նյութեր, վորոնք ընդունակ են մարդու որգանիզմին հասցնել արագ տարածվող վնասվածքներ և վերքեր, գլխավորապես արտասվաբեր թաղանթների վրա:

Այդ նյութերի գործածության նպատակը կայանում է նրանում, վորպեսզի հնարավոր լինի հարկադրել հակառակորդին հակազգ հագնել և դրանով իսկ սահմանափակել իր մարտական գործունեությունը:

Սկզբնական շրջանում գազերը բաց էին թողնում դազագնդերի ոգնությամբ, բայց այդ միջոցը կատարելադործված չեր, վորովհետև իր գործածության համար պահանջում է հատուկ նպաստավոր պայմաններ: Ուստի և համաշխարհային պատերազմում լայն գործածություն գտավ քիմիական գազերի ոգտագործման ուրիշ միջոցը—քիմիական արկերի հրաձգության ոգնությամբ:

Այդ միջոցն ամենեւին կախում չունի քամու ուղ-
ղության հետ, լայնորեն դործադրվում է հակառակորդի
հրետանու դեմ, վորպէս ամենաճիշտ միջոց՝ թշնամուն
լռեցնելու համար:

Թունավոր նյութերից պաշտպանվելու նախնական
միջոցը յեղել է հասարակ տեսակի քողարկումը: Մին-
չև նրա գործադրումը թունավոր նյութերի ներգործու-
թյանը յենթակա դորքերը 1915 թվի ապրիլի 22-ին
Իրա քաղաքի մոտերքում տվել են 35 տոկոս զոհ:

Հակազգային դիմակալորման կատարելագործ-
ման հետ միաժամանակ մահացության տոկոսը իջավ
մինչև 25, 15, 8 և նույնիսկ մինչև 2 տոկոս: Հա-
կազգային դիմակն իր հետագա զարգացումով միշտ
զերազանցում էր զազերին. միայն շատ քիչ դեպքերում
տեղի յեն ունենում թունավորման դեպքեր դիմակների
պակասության պատճառով: Սակայն չպետք է մոռա-
նալ, վոր ամեն մի դիմակ անհարմար է գործածության
համար, քանի վոր դժվար շնչելու հետեանքով նա մար-
տիկի ռադմունակությունը պակասեցնում է:

ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆ ԱՊԱԳՍՅՈՒՄ

Մենք պետք է լավ գիտենանք, վոր ապագա պատե-
րազմն սկսվելու յե միանգամայն անսպասելի, այսինքն
առանց վորեւէ պատերազմ հայտարարելու: Հնարավոր
է, վոր հակառակորդի սավառնակները, առանց պատե-
րազմ հայտարարելու, մի գեղեցիկ որ կթռչեն մեր ար-
դյունաբերական և յերկաթուղային կենտրոնների վրա՝
հարձակում գործելու նպատակով: Ուստի և Կարմիր
բանակն ամեն մի բոպէ պատրաստ պետք է լինի թշնամա-

կան թռիչքին արձագանք տալու համար: Իսկ խաղաղ
քաղաքացիները պատրաստ պետք է լինեն գազային հար-
ձակումից պաշտպանվելու համար: Միանգամայն հա-
վանական է, վոր թշնամին կգործադրի նոր և անծանոթ
զազեր, գուցէ և՛ ավելի ուժեղ, քան իսկիտը և մյուս-
ները: Բոլոր յերկրների քիմիկոսները ձգտում են հնա-
րել այնպիսի մարտական զազեր, վորոնք միանգամայն
անտեսանելի լինեն և վոչ մի հոտ չունենան: Բայց չպետք
է մոռանալ, վոր կարմիր քիմիկոսները և ճարտարա-
պետները ևս զբաղվում են նույն խնդիրներով: Դրա
համար ել Խորհրդային Միության բնակչությունը ա-
պագա գազային հարձակման նկատմամբ վոչ մի հա-
տուկ վախ կամ սարսափ չպետք է ունենա: Հարկավոր
է միայն, վոր մեր Միության ամեն մի քաղաքացի գիտե-
նա, թե ինչ վտանգ կա դադից, և ինչպէս պետք է նրա-
նից պաշտպանվել: Նա պետք է գիտենա, վոր վոչ հա-
սակը, վոչ սեռը, վոչ թշնամուց հեռավոր վայրը նրան
զազային հարձակման տակ ընկնելու հնարավորությու-
նից չեն փրկի:

Նրան փրկում են հակազազերը, քիմիական պաշտ-
պանության ուժեղ միջոցները և խիստ կարգապահու-
թյունը, վորն անհրաժեշտ է պահպանել գազային հար-
ձակման ժամանակ: Բայց ամենազխաւորը, վոր կա-
րող է փրկել ամեն մի քաղաքացու քիմիական պատե-
րազմի սարսափից, դա քիմիական մեր սեփական ար-
դունաբերության ուժեղ զարգացումն է: Այն յերկիրը,
վորն ունի գազային պաշտպանության և՛ հարձակման
բոլոր միջոցները, նրա վրա հարձակվելը շատ դժվար է:
Բացի այդ, մեր Միության բնակչությունը յերկրի քիմի-
ական պաշտպանության համար պետք է պատրաստ լի-

նի, վարպետդի հակառակորդը մեզ անելանելի դրուժյան
մեջ չդնի, իսկ բնակչութիւնը քիմիական պաշտպանու-
թյան համար պատրաստելու տեսակետից մենք ունենք
խոշոր հնարավորութիւններ, ինչպես, որինակ՝ ողա-
յին քիմիական պաշտպանության սեկցիան, ՊԱՋԲալիա-
քիմ և այլն։ Հարկավոր է միայն, վոր ԽՍՀՄ-ի աշխա-
տավորները միահամուռ ուժերով զարգացնեն այդ
գործը։

VII. ՍԱՊՅՈՐԱ ԳՈՂԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԸ

Պետք է ձգտել մարտում մեզ համար ամենաքիչ կո-
րուստով հակառակորդի՝ կենդանի ուժերին ամենախո-
շոր կորուստները պատճառել։ Դրան կարելի յե հասնել
առաջին հերթին տեղամասի ոգտադործումով, այսինքն
հրացանի համար հենարան գտնելու կարողութեամբ,
վոր կբարձրացնի դիպիւթյան չափը և կծածկի հակա-
ռակորդի դիտողութեանից ու կրակից։ Ամեն մի կետ,
քար և բլրակ կարող է հրաձգի հրացանի համար լինել
հենարան, ամեն մի վրտ, անցք, արկի փորվածք և ճեղք-
վածք կարող է ոգնել հրաձգին թշնամու դիտողութեու-
նից և կրակից ծածկվելու համար։ Սակայն տեղանքը
միշտ բավարար քանակութեամբ բնական ծածկվածքների
չի կարող ունենալ։ Պետք է քողարկվել նաև բահերի
ոգնութեամբ։ Քողարկումը կայանում է՝ տեղանքի
տեսքին համապատասխան գունավոր հանդերձանք գոր-
ծածելու, տեղանքի վրա—նրա բնույթին և ֆոնին հա-
մապատասխանող արհեստական կառուցվածքների,
այլև գործերն ու նրանց նյութական մասերը ցամաքային
և ողային հետադոտումից ծածկելու համար տեղանքի
վրա արհեստական քողարկում և չիրմաներ ստեղծելու
մեջ։

VIII. ԶՈՐԲԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՊԱՏԵՐՍԱՍՈՒՄ

I. ՏԵՂԱՎՈՐՈՒՄԸ

Պատերազմում մարտն ունի ամենաառաջնակարգ նշանակությունը:

Մարտը վորոշում է պատերազմի բոլոր հարցերը:

Այն ամենը, ինչ վոր կա պատերազմում, — դա մարտի նախապատրաստումն է: Մարտի նախապատրաստումը պարփակում է իր մեջ այն բոլոր ձեռնարկումները, վորոնք պետք է նպաստեն հակառակորդի նկատմամբ հաղթանակ տանելու գործին: Հակառակորդի հետ կռվելու համար պետք է մոտենալ նրան, պարզել՝ ինչ տեղ է գրավել և ինչ է անում: Հակառակորդին մերձենալու ժամանակ պետք է պաշտպանել իրեն թևերի անսպասելի հարձակումներից, այսինքն պետք է կտտարել յերթային շարժում, կտտարել հետազոտություն, պաշտպանել իր զորքերի տեղավորումը և շարժումը: Այս բոլորը կազմում են մարտի նախապատրաստումը և պատերազմում, մարտի հետ համեմատած, խլում են ավելի շատ ժամանակ: Մարտական այդպիսի նախապատրաստական աշխատանքը զորամասերի կազմի մեջ յեղող մարտիկներից պահանջում է մեծ լարվածություն և հոգնեցնում է նրանց:

Յեկ յերթ մարտիկը հոգնած ու ջարդված է, նա հե-

տադա աշխատանքի համար քիչ է ընդունակ: Նշանակում է, պատերազմի ժամանակ պետք է միջոցներ, հրնարավորություններ ստեղծել, վորոնք թույլ կտան վերականգնելու մարտական աշխատանքներում հոգնած մարտիկների ուժերը: Այդպիսի միջոց է հանդիսանում հանգիստը: Հանգիստը վերականգնում է մարտիկի ուժերը և նրան կրկին մարտունակ դարձնում: Միայն առողջ և ուժեղ զորամասը կարող է չափել մարտը. հոգնած և հիվանդ մարտիկը քիչ պետքական է մարտի համար: Հանգիստ ասելով ընդհանրապես հասկացվում է վոչ միայն քունը, այլև այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ է մարդուն իր առողջությունը պահպանելու և կարգի բերելու համար: Մարտիկներին հանգիստ է տրվում մարտական պարադայի զանազան դրություններում՝ յերթի ժամանակ, տեղավորման, պաշտպանություն գեպում, մարտի ընթացքում և այլն:

2. ՀԱՆԳԻՍՏԸ ՅԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ

Յերթաշարժերը, վոր մարտիկները կատարում են յերթային ամբողջ հանդերձանքով, հոգնեցնում են նրանց և պահանջում են ուժերի հակադաս վատնում, հատկապես չոգ և ցուրտ յեղանակներին, անձրևների ժամանակ և այլն: Մարտիկների ուժերը հավաքելու համար յերթի ժամանակ ամեն մի ժամվա ընթացքում տրվում է հանգիստ 10 րոպե տևողությամբ: Իսկ յերթ ճանապարհի մեծ մասն արդեն անցած է, այսինքն 10—15 կիրոմետր (որական անցքն է 20—25 կիրոմետր), սովորաբար 2—4 ժամ հանգիստ է տրվում:

Յերթաշարժի ժամանակ մարտիկների ուժերը հա-

վաքելու համար դործադրվում են մի շարք միջոցներ. թույլ ե տրվում համաքայլ չգնալ, խիստ պահպանվում ե նախագծված հեռավորությունը զորամասերի միջև, յեթե հնարավոր ե, մարտիկների հանդերձանքը տարվում ե սայլերով, յեթե ճանապարհը գծվար ե, որինակի համար, փոշոտ կամ ցեխոտ ե, թույլատրվում ե քայլել ճանապարհի կողքերով: Մարտիկների ուժը ե առողջութունը պահպանելու համար դործադրված բոլոր միջոցները նպատակ ունեն պահպանել նրանց մարտունակութունը: Հաճախ պատահում ե, վոր զորամասերը յերթի ընթացքում մարտի յեն բռնվում:

3. ՀԱՆԳԻՍԸ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՏԵՂԱՎՈՐՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Յերբ զորամասերն անցնում են 25—30 կիլոմետր ճանապարհ, դրանով նրանց որական յերթաշարժը համարվում ե կատարված: Բայց դա պահանջում ե Տ—!) ժամ տևողութուն, այսինքն մի լրիվ բանվորական որ: Բանվորական որն ավարտելուց, այսինքն որական յերթաշարժից հետո մարտիկներին բնակավայրերում, լեռներում, գյուղերում ե կամ բաց յերկնքի տակ տրվում ե հանգիստ: Յերբ զորամասերը մոտենում են իրենց հանգստի տեղին, նրանց կողմից առանձնացվում ե պահպանության պահակ: Սովորական մի հրաձգային զնդից առանձնացվում ե մի գումարտակ: Զոկատն ամբողջ ճանապարհին, վորի ընթացքում կարելի յե սպասել հակառակորդին, առանձնացնում ե պահապան վաշտ: Ամեն մի պահապան վաշտ իրենից առանձնացնում

ե միքանի պահապան ուղեկալներ՝ կազմված ամեն մեկը 1—2 դասակից, իսկ ուղեկալներն առանձնացնում են դաշտային պահակներ 1—2 ջոկի ուժով: Բացի այդ, վաշտը թշնամու թևերն ե ուղարկում հետախույժներ ե դիտողներ:

Անշարժ պահպանության ծառայությունը պետք ե լինի աչալուրջ ե կազմակերպված. չե՞ վոր նրանք պահանուս են իրենց զորամասերը. մարտիկներն իրենց կյանքի պաշտպանությունը հանձնում են իրենց ընկերներին, ե դրա համար ել պահպանության անշարժ ծառայության թափթիվածությունը, անկազմակերպությունը ե անզուշուրթյունը մեծ վնաս կարող են պատճառել մարտիկների կյանքին: Զորամասերի անշարժ պահպանության ծառայությունը տևում ե 24 ժամ: Պահպանության մասերի մարտիկների մի մասը կարող են հանգստանալ, բայց իհարկե, առանց չորերը ե հանդերձանքը հանելու, իսկ մյուս մասը պարտավոր ե աչալուրջ ե զգաստ մնալ, վորպեսզի հակառակորդի հարձակման դեպքում ամեն ռոպե պատրաստ լինի դաշտային պահակներն առանձնացնելու:

Այնքան, վորքան հնարավոր ե հարձակումը հանդիստի տեղավորված զորքերի վրա ե՛ ճակատից ե՛ թիկունքից ե՛ թևերից, դրա համար ել պահպանությունը պետք ե լինի չորս կողմից:

4. ԱՆՇԱՐՇ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ապահովել դիտավոր ուժերի հանդիստը պատահական ե անսպասելի հարձակումներից ե թույլ չտալ հակառակորդի հետախույժներին մոտենալու:

Հարձակման դեպքում գլխավորել և կանգնեցնել թըշ-
նամուն, քանի դեռ գլխավոր ուժերը պատրաստ չեն
մարտի դուրս գալու:

5. ՅԵՐԹԱՇԱՐԺԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՅԵՎ ՆՇԱՆԱԿՈՒ- ԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՍՈՒՄ

Պատերազմում ավելի շատ պետք է քայլել, քան
կռվել: Յերթաշարժերը զորամասերին ավելի շատ են
թուլացնում և հալից գցում, քան ինքը մարտը: Լավ
կլիններ, յեթե մենք կարողանայինք ավելի քիչ քայլել
և յերկաթուղով ճանապարհորդել, բայց յերկաթու-
ղիները մեզանում ամեն տեղ չեն գնում, այլ միայն գը-
նում են կարևոր ուղղութիւններով:

Լեհ-խորհրդային վերջին պատերազմում 1920 թը-
վին, Կարմիր բանակը Արևմտյան Դվինա գետից մինչև
Վիսլա անցավ, սակայն այդ հսկայական ճանապարհի
վրա շատ քիչ կռիվ յեղավ:

Յերթաշարժերը լինում են զանազան տեսակի.—
հարձակողական, նահանջողական և թևային:

Հարձակողական յերթով զորքը գնում է ուղիղ
հակառակորդի դեմ, նպատակ ունենալով գտնել նրան,
մարտի բռնվել կամ ուժով տիրել հակառակորդի տե-
ղավորված տեղանքները: Այդ շարժումը պահանջում է
արագութիւն, ծածկվածութիւն և լրիվ պատրաստվա-
ծութիւն, վորպեսզի հնարավոր լինի յերթից մարտի
անցնել:

Նահանջողական շարժման դեպքում զորամասերը
անհետանում են հակառակորդից, խուսափելով մարտից.
նման դեպքում մեծ նշանակութիւն է ունենում ծած-

կվածութիւնը, կարգադահության պահպանումը,
հատկապես անհանդիմ մարտից հետո: Թևային շարժում-
ները—յերբ զորամասերը գնում են հակառակորդի կող-
քերով—զործադրվում են նրա համար, վորպեսզի չըջան-
ցնեն թշնամու թևերը կամ շարժման մի ճանապարհից
անցնեն մյուսին, վորպեսզի հակառակորդին հարվածեն
այլ կողմից և այլ ուղղութիւններով:

Թևային շարժումները ձեռնտու յե կատարել հա-
կառակորդից հեռու, դետերով և անտառներով, քո-
ղարկվելով հնարավորության սահմաններում ավելի
արագութիւմբ և ծածկվածութիւմբ:

Մեծ զորամասերը, այսինքն 2—3 հետևակ գնդեր
հարձակման ժամանակ առաջ են ուղարկում առաջա-
պահ մասեր (ավանգարդ), իսկ թիկունք՝ վերջապահ
(արյերգարդ): Առաջապահ մասերի խնդիրն է՝ յետ
մղել հակառակորդի վորք մասերը, խոչըր մասերը
կանգնեցնել մինչև գլխավոր ուժերը կմոտենան մար-
տին:

Նահանջի դեպքում յետևից գնում է վերջապահը:
նրա խնդիրն է՝ պահել հակառակորդին այնքան ժամա-
նակ, վորքան անհրաժեշտ է գլխավոր զորամասերին
անարգել կերպով թշնամուց հեռանալու համար: Վեր-
ջապահը նահանջելու ժամանակ առաջապահից ուժեղ է
լինում. նրան հատկապես պետք է հրետանի, վորն իր
կրակով հեռու տարածութիւնից ամենից շուտ և լավ
կարող է կանգնեցնել թշնամուն:

IX. ՀԵՏԼԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ

1. ԻՆՉ ԲԱՆ Ե ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԻՆՉՈ՞Ւ
ՀԱՍԱՐ Ե ՆԱ ԱՆՀՐԱԺԵՇՏ

Ամեն մի զորամաս միշտ պետք է պատրաստ լինի հակառակորդի հետ կռվելու։ Նախապատրաստվել մարտի—նշանակում է նշել իր մարտական դործողությունները պլանը, յեղնելով տեղամասի բոլոր պայմաններին։ Դրա համար անհրաժեշտ է ամենից առաջ նախորոք և լավ ուսումնասիրել այն տեղանքը, վրի վրա լինելու յե մարտը, իսկ հետո՝ դիտենալ՝ վրտեղ և ինչպես է տեղավորված հակառակորդը, ինչպիսին են նրա ուժերը, և ինչ է նա մտադիր անելու։

Առանց այդ տեղեկությունների դժվար է առաջիկա մարտի հաջողության մասին մտածել: Ամեն մի մարտական դործողության վրա տեղանքը ունենում է խոշոր ազդեցություն: Առանց նախորոք նրա բոլոր հատկություններին ծանոթ լինելու, հարձակվող զորամասը կարող է հանդիպել անսպասելի արդեւքների (գետեր, ձահիճներ, ձորեր և այլն): Նման բոլոր դեպքերում հարձակվողն անխուսափելիորեն կունենա անտեղի զոհեր հակառակորդի կրակից, կքայքայի և կթուլացնի իր ուժերը, հետևապես նաև կփչացնի մարտը չահելու շանսերը:

Նույնը տեղի կունենա և այն դեպքում, յեթե նա-
խապես պարզված չեն թշնամու ուժերը և դասավորու-

Թյունը: Վորպեօղի զորամասերը հնարավորություն ունենան միշտ համոզված գործելու, իսկ նրանց պետերը իստորոք գիտենան առաջիկա մարտի պայմանները, կազմակերպվում է հետախուզություն:

2. ԻՆՁ Ե ՊԱՀԱՆՋՎՈՒՄ ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐ

Ռազմական պարտզան ճակատում միատեսակ չի լինում և գրեթե շարունակաբար փոփոխվում է: Այդ դրուժյունը պահանջում է, վրպեսզի պարտադիր կերպով և անդադար հետախուզություն տարվի: Յեթե հետախուզությունը սխտեմատիկ չտարվի, ապա զորամասերի պետերը վոչ մի դեպքում ճիշտ ե ստուգված տեղեկություններ չեն ունենա թշնամու, նրա ուժերի և տեղավորման մասին. նշանակում է՝ նաև չեն կարող գտնել հարձակման կամ պաշտպանություն համար ամենալավ միջոցը:

Ուստի և ամեն մի հետախուզող գործատու ընդհար-
վելով հակառակորդի հետ, նրան արդեն չպետք է հա-
յսցելից բաց թողնի և պարտավոր է համառորեն, ան-
դադար հետևել նրա ամեն մի բային: Միայն նման
դեպքում հետախուզության բոլոր տեղեկություններն
արժեքավոր և չահավետ կլինեն: Պատերազմում պա-
րագան անոգ փոխվում է: Մարտական պարագայի
այլերինակ արագ փոփոխումը պահանջում է նաև իր
ժամանակին տեղ հասցնել հետախուզության հաղոր-
վագրությունները: Հետախուզության աված բոլոր լու-
րերը, ինչքան ել վոր կարևոր լինեն, ուշացած տեղ
հասցնելու դեպքում կորցնում են իրենց նշանակություն-
ը

նը, քանի վոր այդ լուրերի ոգտագործման ժամանակն տրդեն բաց և թողնված լինում:

Հետախուզության հաղորդագրությունները հնարավորին հալի պետք և լինեն ստուգված և լրիվ: Յեթև հետախուզության տված տեղեկությունները սուտ ու սխալ լինեն, դա միշտ վատ հետևանքներ կունենա մարտական խնդրի իրագործման վրա: Անհրաժեշտ և նույնպես, վորպեսզի բոլոր հետախուզիչներն ունենան անհրաժեշտ վճռակաճություն իրենց վրա դրված խնդիրները մինչև վերջը, ինչ գնով ել ուզում և լինի, իրագործելու համար:

Ամենազխալոր հատկությունը, վորին պետք և տիրապետեն բոլոր լավ հետախուզիչները, — դա համարձակությունը, յետանդը և ճկունությունն և: Անհրաժեշտության դեպքում պետք և կուով ձեռք բերել այն բոլոր տեղեկությունները, վորոնք անհրաժեշտ են զորամասերին:

3. ԻՆՁ ՊԵՏԲ Ե ԳԻՏԵՆԱ ՅԵՎ ԿԱՐՈՂԱՆԱՂԱՆԵԼ ՀԵՏԱԽՈՒՅՁԸ

Լավ հետախուզություն կատարելը և տեղանքի ու հակառակորդի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկությունները հավաքելը շատ դժվար գործ և, և ամեն մի մարդ ընդունակ չէ դա անելու. հատկապես այդ դժվար և այժմս, յերբ հակառակորդի մոտ կան կրակի բազմաթիվ և ուժեղ միջոցներ, վորի ոգնությամբ նա աշխույժ պաշտպանում և իր տեղավորման բոլոր մատուցները:

Հակառակորդին իրապես հայտնաբերելու կամ

հաստատապես համոզվելու համար, վոր նա բացակայում և, անհրաժեշտ և հետազոտել տեղանքը:

Պետք և անպայման հետազոտել ամեն մի թուփ, ամեն մի առու, ամեն մի բլրակ: Հետախուզիչը պետք և գործի այնպես, վոր նա բոլորը տեսնի, բայց ինքը մնա անտեսանելի թշնամու համար: Այս բոլորը խոսում են այն մասին, վոր հետախուզությունը կարելի չէ կատարել միայն լավ նախապատրաստված մարտիկներով, վորոնք գործնականում կարող են իրագործել իրենց գիտելիքները: Ուստի և ամեն մի սպամիկ պետք և լինի վոչ միայն լավ մարտիկ, այլև շատ լավ հետախույզ:

4. Ո՛Վ ՅԵՎ ԻՆՁՊԵՍ Ե ՏԱՆՈՒՍ ՀԵՏԱԽՈՒՅՈՒԹՅՈՒՆԸ

Հետախուզություն կատարում են հետևակը, հեծելազորը, հրետանին, ոդանավատորմը և մյուս մասնազորական զորամասերը: Հետախուզության հիմնական միջոցները հանդիսանում են հեծելազորը և ավիացիան:

Սովորաբար հետևակը տանում և ինքնուրույն հետախուզություն թշնամու հետ անմիջական ընդհարում ունենալու չըջանում, իսկ առանձին դեպքերում՝ նաև 6—7 կիլոմետր հեռավորության վրա իր առաջավոր զորամասերից: Հետևազորը հետախուզություն և կատարում յերկու հիմնական միջոցներով — դիտողությամբ և մարտով: Հետախուզության և դիտողության համար զորամասերից առանձնացվում են միայն առանձին՝ 2—3 հոգուց կազմված դետեքեր: Տեղեկություններ

Հավաքելու համար հետախուզային զորամասերն առանձնացնում են առնվազն մեկ հրաձգային ջոկ:

Ամեն մի հետախուզային զորամաս հետախուզութան իրազործման ղեպընձ բաժանվում է հետախուզային խմբակներին և կորիզներին:

Հետախուզային վաշտն իր կազմից առաջ շարժվելու համար առանձնացնում է 1—2 դասակ, իսկ մնացած դասակներին կազմում է կորիզներ: Դասակն առանձնացնում է հետախուզող ջոկեր և կորիզներ: Հետախուզային ջոկն առաջ է ուղարկում 1—2 դետեքեր, ամեն մեկը կազմված 2—3 դիտակալներից, իսկ մնացած մարտիկները կազմում են ջոկի կորիզը:

Կորիզը միշտ շարժվում է հետախուզային խմբակի յետևից, վորոշակի տարածության վրա և հանդիսանում է հետախուզային առաջավոր մասերի պահեստը:

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր հետևակ հետախուզութան հիմնական բջիջը հանդիսանում է հրաձգային ջոկը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. Նաք պատերազմի վտանգը	3
2. Սպառազինում կապիտալիստական յերկրներում	5
3. Ռազմական բյուջեները	6
4. Դավային և ողային նավատորմը	9
5. Ռազմա-հասարակական կազմակերպությունները և բնակչության ռազմականացումը կապիտալիստական յերկրներում	11
6. Ինչու համար պետք է ուսումնասիրել ռազմական գործը	13
7. Տեխնիկան և նրա դերը ռազմական գործում	16
8. Ինչպես են ստորաբաժանվում ռազմական տեխնիկայի միջոցները	17
9. Ինչու և ինչպես պետք է ուսումնասիրել ռազմական գործը	19

ՀԵՏԵՎԱԿ

10. Հետեվակը գործի հիմնական տեսակն է	21
11. Հետեվակի հատկությունները	22
12. Հետեվակի բույլ կազմերը	25
13. Հետեվակի խնդիրները	25
14. Հետեվակի կազմակերպումը	26
15. Հետեվակի սպառազինումը	28
16. Գումարտակային հրետանին	32

ՀՐԵՏԱՆԻ

17. Հրետանու դերը և նշանակությունը այժմյան մարտում	33
18. Այժմյան հրետանու հատկությունները	34

ՀԵՏԵԼԱԶՈՐ

	Եջ
19. Հեծելագործի դերը	35
20. Հեծելագործի հատկությունը	35
21. Հեծելագործի խնդիրները	36
22. Հեծելագործի կազմակերպումը	37
23. Հեծելագործի սպառազինումը	37
24. Ողանավատորմ	39
25. Զրահապատ մասեր, նրանց դերը, զարգացումն ու նշանակությունը	44
26. Հասկացողություն փմիական պատերազմի մասին	49
27. Փիմիական պատերազմն ապագայում	50
28. Սապյորա-ֆոդարկային գործը	53
29. Զորքերի գործունեության տեսակները պատերազմում: Տեղավորում	54
30. Հանգիստը յերթի ժամանակ	55
31. Հանգիստը տեղամասում տեղավորվելու ժամանակ	56
32. Անշարժ պահպանության խնդիրները	57
33. Ցերքաշարժերի տեսակները և նշանակությունը պատերազմում	58

ՀԵՏԱՆՈՒԶՈՒԹՅՈՒՆ

34. Ինչ բան է հետախուզությունը և ինչու համար է նա անհրաժեշտ	60
35. Ինչ է պահանջվում հետախուզության համար	61
36. Ինչ պետք է գիտենա և կարողանա անել հետախույզը	62
37. Ով և ինչպես է տանում հետախուզությունը	63

123
ԳԻՆԸ 25 ԳՈԳ.

in 8

2013

ՀՀ Ազգային գրադարան



0440

NL0048327

